ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔՈԼԵՋ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2026

ՆԱԽԱԲԱՆ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջի (այսուհետ՝ ՄՈւՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջի ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3
ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 5
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 11
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 13
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 15
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 19
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 24
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 27
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 30
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 32
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 35
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 37
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 39
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 42
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 43
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 43
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 44
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 46
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 47
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 48

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը

ՄՈՒՀ-ը հիմնադրվել է 2015 թվականի դեկտեմբերի 28-ին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության N 911-Ն որոշմամբ՝ նպատակ ունենալով ապահովել տեխնոլոգիական, ճարտարապետաշինարարական և գյուղատնտեսական ոլորտներում մասնագետների պատրաստում: Սկզբնական շրջանում ՄՈՒՀ-ը գործել է Շուշիում՝ հանդիսանալով կարևորագույն բարձրագույն կրթական կենտրոններից մեկը: Սակայն 2020 թվականի Արցախյան պատերազմից հետո ՄՈՒՀ-ը ստիպված է եղել ժամանակավորապես դադարեցնել իր գործունեությունը Շուշիում և տեղափոխվել Ստեփանակերտ: 2024 թվականին, այս ընթացքում անցնելով վերակազմավորման փուլ, ՇՏՀ-ն շարունակել է իր գործունեությունը՝ նոր իրավաբանական կարգավիճակով քոլեջի ձևով[1]:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

ՄՈՒՀ-ն ունի հստակ սահմանված առաքելություն՝ պատրաստել աշխատաշուկայում պահանջվող, գործնական հմտություններով զինված մասնագետներ, որոնք կարող են նպաստել երկրի տնտեսական զարգացմանը: Քոլեջը իրականացնում է հինգ միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ «Հաշվապահական հաշվառում», «Գյուղացիական տնտեսության կազմակերպում», «Տվյալների բազաների մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր», «Քաղաքաշինական կադաստր» և «Դիզայն»:

2024–2025 ուսումնական տարում քոլեջում սովորում է 142 ուսանող, որոնց զգալի մասը Արցախից տեղահանված ուսանողներ են: Դասախոսական կազմը կազմում է 37 անձ, որոնցից 29-ը աշխատում են համատեղությամբ: Ուսանողները հիմնականում Արցախից տեղահանված անձինք են:

[1] «ՇՈՒՇիհի ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔՈԼԵՋԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԷՋ 4-5

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խմբի կողմից: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական խումբը գնահատումն իրականացնելիս հաշվի է առել, որ Քոլեջը նորաստեղծ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որը ձևավորվել է 2024–2025 ուսումնական տարվանից՝ նոր իրավական կարգավիճակով և գործառույթներով: Հաստատությունը գործում է անցումային փուլում՝ բուհական կրթական մոդելից անցնելով միջին մասնագիտական կրթության համակարգին և նոր միջավայրում ձևավորելով իր կառավարման, ծրագրային և որակի ապահովման հիմքերը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևոր է համարում արձանագրել, որ քոլեջի գործունեությունը հիմնվում է մասնագիտական և կադրային շարունակականության վրա, քանի որ դասախոսական կազմի զգալի մասը նախկինում ներգրավված է եղել Արցախի Հանրապետությունում գործող Շուշիի տեխնոլոգիական համալսարանի կրթական գործընթացներում: Այս հանգամանքը ինստիտուցիոնալ կայացման փուլում հնարավորություն է տալիս օգտագործել կուտակված կրթական, մեթոդական և մասնագիտական փորձը՝ ապահովելով ուսումնական գործընթացի հարաբերական կայունություն մեկնարկային փուլում:

Հաստատությունն ունի հստակ ձևակերպված, աշխատաշուկային ուղղված առաքելություն և ցուցաբերում է նախաձեռնողական մոտեցում զարգացման և նոր միջավայրին հարմարվելու գործընթացում: Քոլեջի առաքելությունը ամրագրված է 2024–2029 թթ. ռազմավարական ծրագրում և համահունչ է ՈՒՇ-ին ու ոլորտային պահանջներին՝ ուղղված գործնական հմտություններով և ժամանակակից գիտելիքներով մասնագետների պատրաստմանը:

Կառավարման մակարդակում ապահովվում է օպերատիվ արձագանք անցումային մարտահրավերներին, ինչը նպաստում է հաստատության գործառնական կայունությանը մեկնարկային փուլում: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևորում է տվյալ պայմաններում անցումային ռազմավարության մշակման անհրաժեշտությունը, որը կարտացոլի ներկա իրավիճակից բխող առաջնահերթ խնդիրները և դրանց լուծման իրատեսական քայլերը: Նման ռազմավարությունը հնարավորություն կտա հստակեցնել քոլեջի զարգացման առաջնահերթությունները և ռեսուրսների նպատակային կենտրոնացման ուղղությունները՝ հաշվի առնելով մարդկային, ֆինանսական և նյութատեխնիկական սահմանափակ կարողությունները:

Տվյալների հավաքագրումն իրականացվում է (ուսանողների առաջադիմություն, հարցումներ, դասալսումներ), սակայն դրանց վերլուծությունն ու կիրառումը հիմնականում կրում է ոչ համակարգային բնույթ և չեն ձևավորում ամբողջական տվյալահեն կառավարման փակ ցիկլ:

Որակի ապահովման համակարգը գտնվում է ձևավորման սկզբնական փուլում և դեռևս չի գործում որպես կառավարման արդյունավետ գործիք. փաստաթղթային բազան առավելապես բուհական է, մարդկային ռեսուրսները սահմանափակ են, իսկ որակի ապահովման գործառույթները կենտրոնացած են հիմնականում հարցումների վրա՝ առանց գործընթացների համակարգային վերլուծության և բարելավման պլանավորման:

Քոլեջը իրականացնում է հինգ միջին մասնագիտական կրթական ծրագիր, որոնք հիմնված են պետական կրթական չափորոշիչների վրա և ընդհանուր առմամբ ապահովում են կրթական ծրագրերի կառուցվածքային ամբողջականությունը: Կրթական գործընթացում լայնորեն կիրառվում են գործնական ուսուցման տարրեր, արտադրական և նախաավարտական պրակտիկաներ, ինչպես նաև գործատու-դասախոսների ներգրավում, ինչը նպաստում է տեսական գիտելիքների և գործնական հմտությունների համադրմանը:

Դասախոսական կազմն ունի բավարար մասնագիտական ներուժ, ներառյալ ոլորտային պրակտիկ փորձ ունեցող մասնագետներ, սակայն առկա են մասնագետների ներգրավման դժվարություններ որոշ ուղղություններում (հատկապես SS ոլորտում), ինչպես նաև մեթոդական հարմարեցման անհրաժեշտություն՝ միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին համապատասխան դասավանդում ապահովելու համար:

Ենթակառուցվածքային և նյութատեխնիկական ռեսուրսները ընդհանուր առմամբ ապահովում են ուսումնական գործընթացի իրականացումը, սակայն մի շարք լաբորատոր, SS և գրադարանային ռեսուրսներ գտնվում են զարգացման փուլում: Քոլեջը արդյունավետորեն օգտագործում է գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, ինչը մեղմում է սեփական ենթակառուցվածքների սահմանափակումները, սակայն միաժամանակ ընդգծում է ներդրումային և ֆինանսական պլանավորման անհրաժեշտությունը՝ կայուն զարգացման համար:

Ուսանողական աջակցությունը, արտաուսումնական ակտիվությունները և կամավորական նախաձեռնությունները ձևավորում են ուսանողակենտրոն կրթական միջավայր, սակայն դրանց արդյունավետությունը դեռևս ամբողջությամբ չի չափվում և վերլուծվում քանակական ու ազդեցության ցուցանիշներով: Կարիերայի ծառայության գործունեությունը գտնվում է ձևավորման փուլում, իսկ շրջանավարտների զբաղվածության համակարգային հետագծումը դեռևս ապահովված չէ:

Հետազոտական գործունեությունը քոլեջում հիմնականում իրականացվում է ուսումնառության շրջանակում և դասախոսների անհատական նախաձեռնություններով . առկա է գիտահետազոտական ներուժ, սակայն ուսանող–դասախոս համատեղ հետազոտությունները և խթանման համակարգված մեխանիզմները դեռևս զարգացած չեն:

Հասարակական պատասխանատվության և հաշվետվողականության ոլորտում քոլեջը իրականացնում է առանձին համայնքային և սոցիալական նախաձեռնություններ, սակայն չունի հասարակության հետ հետադարձ կապի կայուն, ինստիտուցիոնալ մեխանիզմներ և արդյունքահեն հաշվետվողականության համակարգ: Արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ արձանագրվում են դրական նախաձեռնություններ և գործընկերային կապեր, սակայն միջազգայնացման գործընթացները դեռևս գտնվում են նախատեսման և զարգացման փուլում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Քոլեջն ունի հստակ ձևակերպված առաքելություն և աշխատաշուկային ուղղված զարգացման տեսլական, գիտակցում է իր անցումային վիճակը և ցուցաբերում է նախաձեռնողականություն նոր միջավայրում հարմարվելու համար:
2) Գործադիր կառավարման մակարդակում առկա է պատրաստակամություն անցումային մարտահրավերներին արձագանքելու համար:
3) Պետական կրթական չափորոշիչներին համահունչ, աշխատաշուկայի պահանջներին ուղղված միջին մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը:
4) Ուսանողների կրթական, սոցիալական և կազմակերպչական աջակցության հիմնական մեխանիզմների (խորհրդատվություններ, զեղչեր, ՈւԽ գործունեություն) առկայությունը:
5) Գործատու-դասախոսների ներգրավվածության և դասախոսական կազմի մասնագիտական ու գործնական փորձի առկայությունը:

6) Ուսանողների հետազոտական գործունեության ինտեգրումը ուսումնառության մեջ՝ նախագծային, դաշտային և պրակտիկ աշխատանքների միջոցով:
7) Գործնական ուսուցման համար գործընկեր կազմակերպությունների նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործման կիրառումը:
8) Քոլեջի ներգրավվածությունը համայնքային, սոցիալական և կամավորական նախաձեռնություններում ուսանողների մասնակցությամբ:
9) Գործատուների և մասնագիտական կազմակերպությունների հետ բազմաճյուղ համագործակցությունների առկայությունը կրթական ծրագրերի իրականացման գործընթացում:

Հաստատության թույլ կողմերն են.

1) Գործող ռազմավարական ծրագիրը լիարժեքորեն հարմարեցված չէ անցումային փուլին և չի ներկայացնում հստակ ճանապարհային քարտեզ՝ սահմանված առաջնահերթություններով, պատասխանատուներով և ժամկետներով:
2) Առկա է գործառույթների գերծանրաբեռնվածություն և պատասխանատվությունների ոչ բավարար հստակ բաշխում, ինչն ազդում է կառավարման արդյունավետության վրա:
3) Կրթական ծրագրերի պարբերական մոնիթորինգի և համեմատական վերլուծության համակարգված կիրառման բացակայությունը:
4) Համատեղությամբ աշխատող դասախոսների բարձր մասնաբաժինը:
5) Ուսանող–դասախոս համատեղ հետազոտական նախագծերի և հետազոտական գործունեության խթանման համակարգված մեխանիզմների բացակայությունը:
6) Գրադարանային ֆոնդի սահմանափակ ծավալի, թվայնացված ռեսուրսների և համակարգչային տեխնիկայի արդիականացման անհրաժեշտության առկայությունը:
7) Հանրային հաշվետվողականության արդյունքահեն, ազդեցության վրա հիմնված մեխանիզմների և հասարակության հետ հետադարձ կապի ինստիտուցիոնալ համակարգի բացակայությունը:
8) Միջազգայնացման գործընթացների համակարգված, չափելի արդյունքներով և հստակ ճանապարհային քարտեզով կառավարման բացակայությունը:
9) Որակի ապահովման համակարգի ոչ լիարժեք գործարկումը, որը հնարավորություն չի տալիս այն դիտարկել կառավարման արդյունավետությունը բարձրացնող գործիք:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1) Մշակել և հաստատել առանձին անցումային ռազմավարություն, որը հստակ կարտացոլի անցումային փուլում առկա մարտահրավերները, առաջնահերթությունները, իրականացման ժամկետները և պատասխանատու ստորաբաժանումները՝ ապահովելով ռազմավարական ծրագրի և փաստացի իրականացվող քայլերի համահունչությունը:
2) Տարանջատել առաքելությունից և զարգացման ուղղություններից բխող նպատակները (կրթական ծրագրեր, նյութատեխնիկական բազա, ֆինանսավորում, գործընկերներ, մարդկային ռեսուրսներ) և յուրաքանչյուր ուղղության համար սահմանել հստակ գործողություններ, կատարողականի հստակ ցուցանիշներ, ինչպես նաև պատասխանատուներ և ժամկետներ:
3) Անցումային ռազմավարության շրջանակում ակտիվացնել արտաքին հաղորդակցությունը և գործընկերային կապերը՝ զարգացնելով համագործակցությունը գործատուների, տեղական և միջազգային գործընկերների, ինչպես նաև հայկական սփյուռքի հետ, և նպատակային տարածելով քոլեջի գործունեության ու կրթական ծրագրերի մասին տեղեկատվությունը՝ մրցակցային միջավայրում նոր ուսանողների ներգրավումն ապահովելու և հաստատության կայուն գործունեությունը ամրապնդելու նպատակով:

4) Ամրապնդել ռազմավարական պլանավորման, մոնիթորինգի և գնահատման մեխանիզմները՝ ապահովելով, որ տարեկան գործողությունների պլանները և հաշվետվությունները կրեն արդյունքահեն և բովանդակային բնույթ և արտացոլեն անցումային ռազմավարական նպատակների իրագործման առաջընթացը, հատկապես անցումային փուլում:
5) Վերանայել Հոգաբարձուների խորհրդի դերակատարումը՝ նրա գործունեությունը ուղղելով ոչ միայն ընթացիկ գործընթացների կառավարմանը, այլև զարգացմանն ուղղված հարցերին՝ արտաքին շահակիցների ներգրավմամբ, ինչը կնպաստի ռազմավարական աջակցության ընդլայնմանը, նոր ռեսուրսների ներգրավմանը և քոլեջի կայունացմանը:
6) Վերանայել աշխատակիցների գործառույթների բաշխումը և նվազեցնել ծանրաբեռնվածությունը՝ սահմանափակ մարդկային ռեսուրսների պայմաններում հստակ սահմանելով դերերն ու պատասխանատվությունները և ձևակերպելով իրատեսական ակնկալիքներ՝ աշխատանքը զարգացման առաջնահերթ ուղղությունների վրա կենտրոնացնելու նպատակով:
7) Վերանայել քոլեջի կազմակերպական կառուցվածքը՝ այն լիովին համապատասխանեցնելով միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատության առանձնահատկություններին:
8) Վերանայել քոլեջի ներքին փաստաթղթային բազան (կանոնակարգեր, ընթացակարգեր)՝ այն ամբողջությամբ համապատասխանեցնելով միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին:
9) Վերանայել որակի ապահովման քաղաքականությունները և ընթացակարգերը՝ դրանք լիարժեք համապատասխանեցնելով միջին մասնագիտական կրթության կառավարման կառուցվածքին:
10) Իրականացնել որակի ապահովման աշխատանքների հստակ պլանավորում՝ այն բխեցնելով քոլեջի անցումային ռազմավարության տրամաբանությունից և սահմանելով հիմնական գործողությունները, պատասխանատուներին, կատարման ժամկետները և ակնկալվող արդյունքները:
11) Բազմազանեցնել որակի ապահովման մեխանիզմները և ապահովել հավաքագրված քանակական ու որակական տվյալների համադրական և համակարգված վերլուծությունը՝ կառավարչական և ծրագրային բարելավման որոշումների հիմք ձևավորելու նպատակով:

Որակավորումների արժանահավատ շնորհում

12) Ինստիտուցիոնալացնել կրթական ծրագրերի տեղայնացման և վերանայման գործընթացները՝ ապահովելով գործատուների մասնակցությամբ արդեն իսկ ձևավորված դրական փորձի համակարգված, միասնական և շարունակական կիրառումը բոլոր ՄԿԾ-ների շրջանակում:
13) Ընդլայնել և բազմազանեցնել պրակտիկայի իրականացման վայրերը՝ նպատակային ուղղվածությամբ ապահովելու ուսումնառության վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերումը բոլոր կրթական ծրագրերում:
14) Արդիականացնել գնահատման գործիքակազմը և դասավանդման բովանդակությունն ու մեթոդական մոտեցումները՝ դրանք առավել սերտորեն համապատասխանեցնելով միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին և ոլորտի կիրառական պահանջներին:
15) Ապահովել գործնական բաղադրիչի ավելացումը ՄԿԾ-ներում՝ ընդլայնելով գործնական առաջադրանքների ծավալը և նպաստելով ուսանողների մասնագիտական կարողությունների ձևավորմանը և ուսումնառության վերջնարդյունքների առավել լիարժեք ձեռքբերմանը:

16) Վերանայել դասախոսների դասավանդման մեթոդական մոտեցումները քոլեջային մակարդակին համապատասխան՝ ներքին մեթոդական քննարկումների և փորձի փոխանակման ձևաչափերով ու առկա ռեսուրսների օգտագործմամբ։
17) Ներդնել փոխադարձ դասալսումների պլանավորված և համակարգված մոտեցում՝ այն կիրառելով որպես դասավանդման մեթոդների կատարելագործման և ուսուցման որակի շարունակական բարելավման գործիք։
18) Ինստիտուցիոնալացնել սկսնակ դասախոսների մենթորության և մեթոդական աջակցության գործընթացը։
19) Բազմազանեցնել դասախոսների արդյունավետության գնահատման մեխանիզմները՝ դրանք իրականացնելով մի քանի աղբյուրներից եկած տվյալների հիման վրա (ուսանողական հարցումներ, ՈՒԱ գնահատումներ, փոխադարձ դասալսումների արդյունքներ և այլն) և կիրառել ստացված արդյունքները դասախոսների մասնագիտական և մեթոդական կարողությունների զարգացման գործընթացում։
20) Կատարել կրթական ծրագրերի և ուսանողների քանակի հիման վրա անհրաժեշտ նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների հաշվարկ՝ ինքնաճախսածածկման շեմը և զարգացման առաջնահերթությունները հստակեցնելու նպատակով։
21) Բազմազանեցնել ֆինանսավորման աղբյուրները՝ զարգացնելով դրամաշնորհային ծրագրերին մասնակցությունը և կրթական ուղղություններին համապատասխան կարճաժամկետ դասընթացների իրականացումը։
22) Ուժեղացնել ենթակառուցվածքների զարգացման ուղղվածությունը գործնական ուսուցման վրա՝ առաջնահերթ բարելավելով համակարգչային տեխնիկան, լաբորատոր ռեսուրսները և սպորտային միջավայրը։
23) Ներդնել անվտանգության և արտակարգ իրավիճակների կառավարման համակարգված մոտեցում՝ ներառելով տարհանման պլաններ, հրահանգավորման մատյաններ և անվտանգության տեսանելի տեղեկատվություն։
24) Ամրապնդել ռեսուրսների արդյունավետության գնահատման մեխանիզմները՝ հարցումների արդյունքները կապելով կոնկրետ բարելավումների և ներդրումային որոշումների հետ։

Երկարաժամկետ զարգացում

25) Ակտիվացնել դիմորդների հավաքագրման գործընթացը՝ իրականացնելով նպատակային այցեր հանրակրթական դպրոցներ, հանդիպումներ աշակերտների և ծնողների հետ, ներկայացնելով քոլեջի կրթական ծրագրերը, ուսումնառության հնարավորությունները և ուսանողական կյանքը՝ որպես նորաստեղծ հաստատության ճանաչելիության բարձրացման հիմնական գործիք։
26) Կազմակերպել ուսանողական աջակցության միջոցառումների (նախաքննական խորհրդատվություններ, անհատական աջակցություն, ռիսկային ուսանողների հետ աշխատանք) մասնակցության և արդյունքների պարզ, քանակական հաշվառում՝ ապահովելով դրանց ազդեցության տեսանելիությունը ուսանողների առաջադիմության և պահպանման վրա։
27) Ամրապնդել կարիերայի ծառայության գործառույթները՝ գործնական քայլերով իրականացնելով շրջանավարտների նոր տվյալների բազայի ձևավորում և պարբերական թարմացում, ինչպես նաև ապահովելով շրջանավարտների հետ կապի շարունակական պահպանումը ոչ ֆորմալ հաղորդակցումից դուրս։
28) Խթանել Ուսանողական խորհրդի մասնակցությունը ոչ միայն միջոցառումների կազմակերպման, այլև ուսանողների կրթական և սոցիալական խնդիրների բարձրաձայնման և քննարկման գործընթացներում՝ ընդլայնելով ՈւԽ-ի դերը ուսանողական աջակցության համակարգում։
29) Արձանագրել և ամփոփել արտաուսումնական և կամավորական գործունեությանը ուսանողների մասնակցության տվյալները՝ ապահովելով այդ ակտիվությունների

ազդեցության տեսանելիությունը ուսանողների հմտությունների զարգացման և համայնքային ներգրավվածության համատեքստում:

30) Սահմանել ուսանողական հետազոտական աշխատանքների իրականացման, ներկայացման և գնահատման միասնական մեթոդական մոտեցումներ՝ ապահովելով դրանց համապատասխանությունը ՈՒՇ 5-րդ մակարդակի պահանջներին:
31) Խթանել ուսանող–դասախոս համատեղ հետազոտական նախագծերի իրականացումը՝ դրանք ինտեգրելով կրթական ծրագրերի գործնական և նախագծային բաղադրիչներին:
32) Ներդնել հետազոտական գործունեության մոտիվացիոն մեխանիզմներ ուսանողների և դասախոսների համար՝ մրցույթների, փոքր դրամաշնորհների կամ ճանաչման ձևաչափերով:
33) Կազմակերպել հետազոտական գործունեության արդյունքների ներկայացում և տարածում՝ ներքին քննարկումների, ցուցադրությունների կամ հաշվետվությունների միջոցով:
34) Ապահովել հետազոտական գործունեության պարբերական վերլուծություն՝ գնահատելով դրա ազդեցությունը ուսումնառության որակի և ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացման վրա:
35) Մշակել և կիրառել հաշվետվությունների միասնական կառուցվածք՝ արդյունքահեն ցուցանիշներով, նպատակ–գործողություն–արդյունք տրամաբանությամբ:
36) Ներդնել ստորաբաժանումների հաշվետվությունների վերլուծության և համադրման մեխանիզմ՝ ապահովելով կառավարման որոշումների տվյալահեն հիմք:
37) Ապահովել քոլեջի վերաբերյալ տեղեկատվության հստակ, տեսանելի և համակարգված ներկայացում՝ բուհի կայքէջում առանձնացված քոլեջային ենթահարթակի միջոցով:
38) Կազմակերպել հասարակությանը գիտելիքների փոխանցմանն ուղղված միջոցառումներ՝ բաց դասախոսությունների, սեմինարների և հանրային քննարկումների ձևաչափով:
39) Մշակել արտաքին կապերի և միջազգայնացման գործողությունների մանրամասն ճանապարհային քարտեզ՝ հստակ ժամկետներով և չափելի արդյունքներով:
40) Հարմարեցնել արտաքին կապերի և միջազգայնացման քաղաքականությունները միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին:
41) Ակտիվացնել ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը միջազգային ծրագրերին և շարժունության նախաձեռնություններին:
42) Խթանել օտար լեզուների իմացության կիրառումը միջազգային համագործակցությունների իրականացման գործընթացներում:
43) Ապահովել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների համակարգված մոնիթորինգ և վերլուծություն:



_____

Փորձագիտական խմբի ղեկավար

Հերմինե Գրիգորյան
Փետրվարի 20, 2026թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[2] կողմից.

1. **Հերմինե Գրիգորյան**՝ Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, փորձագիտական խմբի ղեկավար:
2. **Օլեգ Գևորգյան**՝ Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀԱՊՀ, փորձագիտական խմբի անդամ:
3. **Սուսաննա Օրդոյան**՝ Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
4. **Գարեգին Դավթյան**՝ Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈՒԱԱԿ, ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Լիանա Ալավերդյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջի պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈՒԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջի և ՈՒԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 09.07.2025 թ–ին: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[3]:

Նախնական այց

2025 թվականի հոկտեմբերի 1-ին հանդիպում է տեղի ունեցել «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈՒԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2025 թվականի հոկտեմբերի 13-15-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսերի դիտարկում[4], փաստաթղթերի[5] դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈՒԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 2026 թվականի փետրվարի 6-ին: Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն արձագանք չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 20.02.2026թ.-ին:



_____

Համակարգող

Լիանա Ալավերդյան
Փետրվարի 20, 2026թ.

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
[5] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամը 2020 թվականի պատերազմի հետևանքով դադարեցրել է իր գործունեությունը Արցախի Հանրապետության Շուշի քաղաքում որպես բարձրագույն ուսումնական հաստատություն և 2024 թվականին տեղափոխվել է Երևան՝ ձեռք բերելով լիցենզիաներ և սկսելով իրականացնել միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Երևանում գործունեություն ծավալելիս ՄՈՒՀ-ը որդեգրել է նոր առաքելություն՝ ուղղված ժամանակակից գիտելիքներով և մասնագիտական կարողություններով զինված, աշխատաշուկայում մրցունակ և ձեռնարկատիրական մտածողությամբ մասնագետների պատրաստմանը՝ նպաստելով երկրի տնտեսական զարգացմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ քոլեջը ներկայումս գտնվում է անցումային փուլում և փորձում է ստեղծել ինստիտուցիոնալ հիմքեր, որոնք հնարավորություն կընձեռեն միջնաժամկետ հեռանկարում ապահովել առաքելությամբ հայտարարված արդյունքները: Քոլեջի առանձնահատկություններից է նաև այն, որ վերջինիս գործունեության մեկնարկը պայմանավորված է եղել նախկինում Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ուսումնառած ուսանողների համախմբմամբ՝ նպատակ ունենալով պատերազմից հետո ապահովել նրանց կրթության շարունակականությունը: Գործունեությունը կազմակերպելու նպատակով ՄՈՒՀ-ը նաև համախմբել է նախկինում գործող Շուշիի տեխնոլոգիական համալսարանի վարչական և դասախոսական աշխատակիցներին՝ շարունակելու արդեն ձևավորված կրթական ավանդույթները նոր միջավայրում:

Փորձագիտական հանդիպումների վերլուծությունը ցույց է տալիս, որ քոլեջն ունի առաքելությունից բխող հստակ սահմանված նպատակներ, որոնք ուղղված են հաստատության հետագա զարգացմանը: Մասնավորապես, ՄՈՒՀ-ը իր զարգացումը դիտարկում է աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնագետների պատրաստման տրամաբանությամբ՝ նախատեսելով կրթական ծրագրերի վերանայում և զարգացում ոլորտային մասնագետների և գործատուների ներգրավմամբ: Զարգացման առաջնահերթ ուղղություն է համարվում ինստիտուցիոնալ և նյութատեխնիկական հիմքերի ստեղծումն ու վերականգնումը՝ շենքային պայմանների բարելավում, լաբորատոր և մասնագիտական լսարանների ձևավորում, տեխնիկական միջոցների համալրում, որոնք ներկայումս իրականացվում են հիմնականում արտաքին աջակցության միջոցով (բարերարների, հասարակական կազմակերպությունների և գործընկեր կառույցների ներգրավմամբ): Միևնույն ժամանակ քոլեջը ձգտում է համադրել տեխնոլոգիական և էկոուղղված ծրագրերը գործող կրթական ծրագրերի հետ՝ ներառյալ ԱԹՍ-ների կիրառումը գյուղատնտեսության ոլորտում և ճարտարագիտական ուղղություններով նոր մասնագիտությունների ներդրումը՝ շուկայում մրցունակությունը բարձրացնելու նպատակով: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը գիտակցում է իր անցումային վիճակը, ֆինանսական ռիսկերը և կախվածությունը արտաքին աջակցությունից, ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը: Չնայած նպատակների զգալի մասը դեռևս գտնվում է պլանավորման փուլում, և դրանց իրագործման համար բավարար կայուն ֆինանսական ու ինստիտուցիոնալ հիմքեր ամբողջությամբ չեն ձևավորվել, առկա են հստակ ուղղվածություն, նախաձեռնողական քայլեր և ռեսուրսների ներգրավման փորձեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ քոլեջի հետագա զարգացման և առաջընթացի համար:

Միևնույն ժամանակ քոլեջի 2024-2029 թթ. ռազմավարական ծրագրի, դրան կից պլան-ժամանակացույցի (նախատեսված է 2025-2029 թթ. համար) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սահմանված քայլերն ու գործողությունների տրամաբանությունը ամբողջությամբ չեն կարող դիտարկվել որպես հստակ ճանապարհային քարտեզ՝ առկա անցումային ժամանակահատվածի հաղթահարման համար: Թեև ուսումնական հաստատությունը գիտակցում է իր առջև ծառացած դժվարություններն ու մարտահրավերները, դրանք ռազմավարական փաստաթղթերում չեն ձևակերպվել ըստ հստակ ժամկետների, պատասխանատուների և առաջնահերթությունների: Արդյունքում ռազմավարական ծրագրում ամբողջությամբ չեն արտացոլվում այն գործնական քայլերը և գործողությունները, որոնք քոլեջը փաստացի իրականացնում է ներկայիս անցումային փուլում. ներկայացված ռազմավարական ծրագիրը նախատեսված է այնպիսի ուսումնական հաստատության համար, որը գործում է կայուն հիմքերի վրա և ունի զարգացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողություններ:

Քոլեջում մշակվել և հաստատվել է «Ռազմավարական ծրագրի, նրա իրականացման ռազմավարական պլանի և կատարողականի գնահատման կարգ» փաստաթուղթը, որով սահմանվում են ռազմավարական ծրագրի իրականացման, մշտադիտարկման և գնահատման գործընթացները: Կարգի համաձայն՝ քոլեջի կառուցվածքային ստորաբաժանումները կազմում են տարեկան գործողությունների պլաններ և դրանց կատարման վերաբերյալ ներկայացնում հաշվետվություններ: Տարեկան պլանների և հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քոլեջը փորձել է դրանք համադրել ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների հետ՝ հիմնականում քաղաքականությունների և ներքին փաստաթղթերի մշակման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, ՄՈՒՀ-ի կողմից կատարված մի շարք քայլեր պայմանավորված են քոլեջի անցումային փուլով և հիմնականում ուղղված են հաստատության ընթացիկ կենսունակության ապահովմանը. մասնավորապես՝ պրակտիկաների իրականացման վայրերի որոնմանը և դրանց ներգրավմանը ուսումնական գործընթացում, բարերարների և ֆինանսավորման նոր աղբյուրների, ինչպես նաև միջազգային գործընկերների որոնմանը, ինչը նպատակ ունի ստեղծել զարգացման նախադրյալներ և ապահովել անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն հանգամանքը, որ քոլեջը գիտակցում է իր զարգացման հիմնական ուղղությունները և ունի հստակ պատկերացում միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ակնկալվող արդյունքների վերաբերյալ: Միևնույն ժամանակ արձանագրվում է, որ գործող ռազմավարական մոտեցումները, որոնք հիմնված են դասական ռազմավարական տրամաբանության վրա, անցումային պայմաններում չեն կարող ապահովել լիարժեք արդյունավետություն: Այդ համատեքստում անհրաժեշտ է ձևավորել անցումային ռազմավարություն, որի շրջանակում կվերլուծվեն քոլեջի ներկայիս հնարավորությունները, մարտահրավերները և առաջնահերթ խնդիրները՝ հաշվի առնելով փոփոխվող միջավայրը:

Միևնույն ժամանակ կարևոր է հաշվի առնել, որ քոլեջի գործունեության միջավայրը ներկայումս էականորեն փոփոխվել է. Երևանում միջին մասնագիտական կրթության ոլորտում մրցակցությունն առավել բարձր է, ինչի պայմաններում քոլեջը պետք է կարողանա արագ արձագանքել և որոշ ուղղություններ զարգացնել առավել հրատապորեն՝ հաստատության կայունությունը ապահովելու նպատակով: Այդ համատեքստում անցումային ռազմավարությունը պետք է ներառի ոչ միայն ինստիտուցիոնալ և նյութատեխնիկական խնդիրների լուծումը, այլև ուսանողական բազայի ընդլայնմանն ուղղված քայլեր՝ ապահովելով ոչ միայն Արցախից ուսանողների, այլև Երևանի և հարակից մարզերի դիմորդների ներգրավումը:

Անցումային ռազմավարության շրջանակում անհրաժեշտ է հստակ տարանջատել զարգացման հիմնական ուղղությունները և յուրաքանչյուր ուղղության համար սահմանել կոնկրետ գործողություններ, ինչպես նաև դրանց կատարման որակական և քանակական

չափելի ցուցանիշներ՝ պատասխանատվությունը բաշխելով տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների միջև: Նման մոտեցումը հնարավորություն կտա նվազեցնել գործընթացների կենտրոնացումը մեկ անձի կամ սահմանափակ շրջանակի վրա և կապահովի, որ բոլոր ստորաբաժանումները հստակ պատկերացնեն իրենց դերակատարումը, պարտականությունները և ակնկալվող արդյունքները անցումային փուլում:

Միևնույն ժամանակ, որպես անցումային ռազմավարության կարևոր ուղղություն, փորձագիտական խումբը կարևորում է նաև քոլեջի վերաբերյալ տեղեկատվության համակարգված տարածումը և տեսանելիության բարձրացումը նոր միջավայրում՝ որպես դիմորդների ներգրավման և մրցունակության ամրապնդման միջոց: Բացի այդ, որպես զարգացման լրացուցիչ և հեռանկարային ուղղություն, փորձագիտական խումբը գտնում է, որ կարևոր է նաև հայկական սփյուռքի հետ համակարգված կապերի հաստատումը և զարգացումը: Սփյուռքի կրթական, մասնագիտական և բարերար ներուժի ներգրավումը կարող է էական դեր ունենալ քոլեջի ֆինանսական, նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսների ամրապնդման գործում՝ նպաստելով հաստատության կայունացմանը և զարգացմանը նոր միջավայրում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՇՏՀ քոլեջն ունի հստակ ձևակերպված առաքելություն, որը կարող է ապագայում նպաստել հաստատության մրցակցային առավելությունների ձևակերպմանը, առաքելությունից բխող նպատակները ուղղված են աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը, քոլեջը գիտակցում է իր անցումային վիճակը և իր գործունեությունը կառուցում է այդ իրողությունից բխող զարգացման տրամաբանությամբ, ինչպես նաև առկա են զարգացման հստակ ուղղություններ, նախաձեռնողական քայլեր և ռեսուրսների ներգրավման փորձեր, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է Չափանիշ 1-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

Քոլեջն իր գործունեությունը ծավալում է ՀՀ օրենսդրությամբ, ՇՏՀ-ի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով: Քոլեջում գործում են կառավարման հետևյալ հիմնական մարմինները՝ Հոգաբարձուների խորհուրդ, Գիտական խորհուրդ, Մանկավարժական խորհուրդ և Տնօրեն: Հոգաբարձուների խորհրդում ներգրավված են ուսանողներ, դասախոսներ և գործատուներ, վերջիններս միաժամանակ դասավանդում են նաև Քոլեջում: Խորհրդի կազմում արտաքին շահակիցներ՝ ինչպիսիք են բարերարները, սփյուռքի ներկայացուցիչները կամ հանրային կապեր ունեցող անձինք, ներգրավված չեն: Արդյունքում խորհրդի գործունեությունը հիմնականում սահմանափակվում է ընթացիկ կառավարման հարցերի քննարկմամբ և հաստատմամբ, մասնավորապես՝ բյուջեի և հաշվետվությունների ընդունմամբ, և չի հանգեցնում արտաքին ռեսուրսների ներգրավմանը, գործընկերային կապերի ընդլայնմանը կամ քոլեջի զարգացման նոր ուղղությունների ձևավորմանը: ՄՈՒՀ-ում միաժամանակ գործում են Գիտական և Մանկավարժական խորհուրդները, որոնց շրջանակում քննարկվում են կրթական ծրագրերի (ՄԿԾ-ների) վերանայման, ինչպես նաև գործատուներից ստացված առաջարկների և պահանջների հետ կապված և այլ հարցեր: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նշված երկու խորհուրդների

գործառույթները մեծամասամբ համընկնում են, ընդ որում՝ երկու խորհուրդներում էլ ընդգրկված է հիմնականում նույն դասախոսական կազմը: Կառավարման տվյալ մոդելը ձևավորվել է այն հանգամանքով, որ հաստատությունը նախկինում գործել է որպես բուհ, ինչի արդյունքում փորձ է արվել պահպանել բուհական կառավարման որոշ առանձնահատկություններ՝ դրանք համադրելով քոլեջի ներկայիս կառավարման կառուցվածքի հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի ղեկավար անձնակազմը գիտակցում է քոլեջի կառավարման ներկայիս կառուցվածքի վերանայման և այն քոլեջի առանձնահատկություններին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը:

Գործադիր կառավարումն իրականացվում է տնօրենի կողմից, որը համակարգում է բարերարների որոնման և ներգրավման, ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսների հայթայթման, գործընկերային կապերի հաստատման, ինչպես նաև դասախոսական կազմի ներգրավման և այլ կարևոր գործընթացներ՝ ուղղված քոլեջի զարգացմանը և ֆինանսական վիճակի կայունացմանը: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ տնօրենը գիտակցում է քոլեջի անցումային ժամանակահատվածում լինելու փաստը և փորձում է կառավարման ուղղությունները ուղղել այդ խնդիրների լուծմանը:

Ինչ վերաբերում է մարդկային ռեսուրսներին, ապա քոլեջը, լինելով նորաստեղծ ուսումնական հաստատություն, գործունեություն է ծավալում սահմանափակ կադրային հնարավորություններով: ՄՈՒՀ-ում առկա են 2 վարչական աշխատակիցներ (ուսումնական և կազմակերպատնտեսարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալներ), 6 ուսումնաօժանդակ աշխատակիցներ (ուսումնամեթոդական բաժնի տեղակալ, արտաքին կապերի, որակի ապահովման, կադրերի և ընդհանուր բաժնի պետ, գրադարանի վարիչ, հաշվապահ, կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնի պետ) և 37 դասախոսներ, որոնցից 29-ը արտաքին համատեղությամբ են:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք հաստիքային աշխատակիցներ իրականացնում են բազմակի և միմյանցից էապես տարբերվող գործառույթներ: Մասնավորապես՝ որակի ապահովման պատասխանատուն միաժամանակ իրականացնում է հասարակայնության հետ կապերի գործառույթներ, բուժկետի պատասխանատուի պարտականություններ և դասավանդում է: Ընդ որում, տվյալ աշխատակիցը չունի բժշկական ուղղվածությամբ մասնագիտական կրթություն և հանդիսանում է նաև արտաքին համատեղող այլ կազմակերպությունում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ մի շարք գործառույթներ քոլեջում իրականացվում են կամավորական (հասարակական) հիմունքներով, մասնավորապես՝ արտաքին կապերի, կարիերայի զարգացման և շարունակական կրթության բաժնի, գրադարանի վարիչի, բուժկետի, ինչպես նաև ուսումնամեթոդական բաժնի շրջանակում: Մարդկային ռեսուրսների սահմանափակությունը հանգեցնում է նրան, որ ՄՈՒՀ-ում աշխատակիցների առջև հստակ չափելի արդյունքների ապահովման պահանջներ սահմանված չեն: Միևնույն ժամանակ քոլեջի համար ռազմավարական կարևորություն ունեցող ուղղություններով, մասնավորապես՝ ուսանողների կարիերայի ձևավորման, դիմորդների հավաքագրման և ներգրավման գործընթացների համակարգված կազմակերպման ուղղությամբ ակտիվ և համակարգված աշխատանքներ չեն իրականացվում:

Կրթական ծրագրերի իրականացումն ու կառավարումը քոլեջում իրականացվում է երկու դեպարտամենտների և երկու ամբիոնների միջոցով: Մասնավորապես գործում են՝ Դիզայնի և հագուստի մոդելավորման ու ճարտարապետության, քաղաքաշինության, էներգետիկայի և ջրային համակարգերի դեպարտամենտը, Բնագիտության, կապի միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտը, ինչպես նաև Ագրոնոմիայի, անասնաբուժության և գյուղատնտեսության մեքենայացման ամբիոնը և Հումանիտար առարկաների և լեզուների ամբիոնը: Դեպարտամենտների ղեկավարները վարձատրվում են, մինչդեռ ամբիոնների վարիչներն իրենց գործառույթները իրականացնում են հասարակական հիմունքներով: Ամբիոններն ու դեպարտամենտները ներգրավված են կրթական ծրագրերի

կառավարման հիմնական գործընթացներում՝ քննարկելով ՄԿԾ-ների փոփոխությունները և վերանայումները, դասացուցակների կազմումը, դասաժամերի բաշխումը, ինչպես նաև հնարավոր հետազոտական ուղղությունների ձևակերպումը: Նշված հարցերի մի մասը նախնական քննարկումներից հետո ներկայացվում է Մանկավարժական, Գիտական և Կառավարման խորհուրդների քննարկման և հաստատման: Ամբիոնների միջև համագործակցությունը հիմնականում սահմանափակվում է առանձին առարկաների բովանդակության քննարկմամբ, հատկապես այն դեպքերում, երբ տվյալ առարկան նախամուտք է հանդիսանում այլ մոդուլի ուսումնառության համար: Նման քննարկումները հիմնականում նպատակ ունեն դիտարկել ուսանողների առաջընթացը և բացահայտել հնարավոր խնդիրների պատճառները, մասնավորապես արձանագրվել է նման փորձ «Տվյալների բազաների մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր» ՄԿԾ-ի շրջանակում: Սակայն տվյալ փորձը կրում է եզակի բնույթ և դեռևս չի ձևավորվել որպես համակարգված համագործակցության մշակույթ: Ամբիոնների միջև համագործակցություն առկա չէ փորձի փոխանակման, լավագույն փորձի տարածման կամ համատեղ նախաձեռնությունների իրականացման ուղղությամբ:

Քոլեջի բյուջեն ձևավորվում է հիմնականում ուսանողների վարձավճարների և բարերարների նվիրատվությունների հաշվին: 2025 թ.-ին բյուջեն աճել է մոտ 37 %-ով՝ 2024 թ.-ի համեմատ, ինչը պայմանավորված է ինչպես ուսանողական վարձավճարների, այնպես էլ նվիրատվությունների ծավալի աճով: Ինչ վերաբերում է ծախսերին 66.54 %-ը բաժին է ընկնում աշխատավարձերին, ծախսերի հաջորդ խոշոր ուղղությունը շենքերի և կառույցների ընթացիկ նորոգումն ու պահպանումն է՝ 19.27 %: Մնացած ծախսային հոդվածների մասնաբաժինը համեմատաբար ցածր է՝ կոմունալ ծառայություններ՝ 2.85 %, տպագրական և տեղեկատվական ծառայություններ՝ 0.42 %, գրասենյակային նյութեր՝ 0.71 %, տրանսպորտային նյութեր՝ 0.45 %, իսկ այլ հարկեր և վճարներ՝ 9.76 %: Փորձագիտական խումբը նշում է, որ նյութատեխնիկական բազայի զարգացման խնդիրը քոլեջը հիմնականում լուծում է բարերարների աջակցությամբ, որի արդյունքում իրականացվում են լսարանների վերանորոգում, ձեռք են բերվում գույք և համակարգիչներ, ինչպես նաև համալրվում են լաբորատոր սարքավորումները: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս մասնակիորեն փոխհատուցել ֆինանսական սահմանափակումները:

ՄՈՒՀ-ում պլանավորումն իրականացվում է երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման մոտեցմամբ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկարաժամկետ պլանավորումը ներառում է լայն և բազմապրոֆիլ ուղղություններ, որոնք առավել բնորոշ են կայուն ինստիտուցիոնալ հիմքեր ունեցող ուսումնական հաստատություններին: Երկարաժամկետ պլանում ամբողջությամբ չի արտացոլվում քոլեջի առկա մարտահրավերները, անցումային փուլին բնորոշ առաջնահերթությունները և ռիսկերը, իսկ սահմանված ժամկետները հիմնականում ընդգրկում են ռազմավարական ծրագրի ամբողջ տևողությունը՝ առանց հստակ միջանկյալ փուլայնացման: Այս մոտեցման հետևանքով կառուցվածքային ստորաբաժանումները, փորձելով արձագանքել ռազմավարական ծրագրի բոլոր ուղղություններին, իրականացնում են ընդհանրական բնույթի գործողություններ, որոնք ոչ միշտ են բխում քոլեջի իրական առաջնահերթություններից և հաճախ ունեն սահմանափակ իրագործելիություն: Արդյունքում որոշ ուղղություններով նախատեսվում են աշխատանքներ, որոնք տվյալ փուլում համահունչ չեն քոլեջի մարդկային և նյութատեխնիկական հնարավորություններին: Օրինակ՝ որակի ապահովման գործընթացը հիմնականում կենտրոնացած է փաստաթղթերի մշակման վրա՝ փոխարենը համակարգված տվյալների հավաքագրման և վերլուծության, որոնք կարող էին ծառայել որպես հիմք անցումային փուլում կառավարչական որոշումների կայացման համար: Նմանապես, առանձին ստորաբաժանումների առջև դրված են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են քոլեջի օտարալեզու տեղեկատվության բազմազանեցումը և տարածումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ինտենսիվ կիրառումը, ուսանողների հետազոտական աշխատանքների հրապարակման

համար պայմանների ստեղծումը, որոնք, թեև կարևոր են զարգացման տեսանկյունից, սակայն տվյալ փուլում չեն հանդիսանում առաջնահերթ և կարող են շեղել կենսական ուղղությունների իրականացումը ապահովելուց:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ գործընթացների մի մասը դեռ գտնվում է պլանավորման փուլում, իսկ մյուս մասը՝ իրականացման: Քոլեջի փաստաթղթային հենքը, ներառյալ ներքին կանոնակարգերն ու ընթացակարգերը, ամբողջությամբ վերանայված չէ և հիմնականում ձևավորվել է նախկին բուհական համակարգի տրամաբանությամբ: Արդյունքում գործող փաստաթղթերը դեռևս լիարժեքորեն չեն համապատասխանեցվել միջին մասնագիտական կրթության կազմակերպման առանձնահատկություններին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ ներկայիս կառավարման մոդելը որոշակիորեն հնարավորություն է տալիս ապահովել քոլեջի գործունեության շարունակականությունը անցումային փուլում, սակայն կառավարման բոլոր մակարդակներում այն դեռևս լիարժեքորեն ուղղված չէ հաստատության երկարաժամկետ զարգացման ապահովմանը: Հոգաբարձուների խորհրդի գործունեությունը ներկայումս հիմնականում կենտրոնացած է ընթացիկ կառավարման հարցերի քննարկման և հաստատման վրա, ինչի արդյունքում խորհրդի մասնակցությունը երկարաժամկետ զարգացման և բարելավման գործընթացներին լիարժեք չի իրացվում: Այս համատեքստում նպատակահարմար է խթանել խորհրդի գործառույթների առավել ակտիվ իրականացումը՝ դրանք աստիճանաբար ուղղելով ոչ միայն ընթացիկ կառավարման, այլև երկարաժամկետ զարգացման խնդիրների լուծմանը: Արտաքին շահակիցների՝ գործարար շրջանակների, բարերարների և սփյուռքի ներկայացուցիչների ներգրավումը կարող է էականորեն ակտիվացնել խորհրդի դերը և նպաստել քոլեջի ֆինանսական ու գործընկերային հնարավորությունների ընդլայնմանը: Նման մոտեցումը հնարավորություն կտա զարգացմանն ուղղված աշխատանքները իրականացնել միաժամանակ մի քանի ուղղություններով՝ ստեղծելով աստիճանական կայունացման առավել շատ նախադրյալներ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում գործադիր կառավարման նախաձեռնողականությունը: Տնօրենի կողմից որդեգրված ուղղությունները՝ բարերարների և գործընկերների ներգրավումը ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսների ձեռքբերման համար, ինչպես նաև դասախոսական կազմի համախմբումը, համահունչ են քոլեջի անցումային փուլին բնորոշ առաջնահերթություններին: Ձեռնարկված քայլերի արդյունավետությունը տեսանելի է բյուջեի աճով և նյութատեխնիկական բազայի զարգացման փաստացի արդյունքներով: Այդուհանդերձ, հաջորդ փուլում նպատակահարմար է գործադիր կառավարումը կառուցել առավել համակարգված և պլանավորված հիմքերի վրա՝ տնօրենի կողմից սահմանվող առաջնահերթությունները ձևակերպելով որպես անցումային ռազմավարության բաղկացուցիչ մաս: Կարևոր է, որ այդ առաջնահերթությունները հստակեցվեն, փուլայնացվեն և ունենան չափելի արդյունքներ, ինչպես նաև ընկալվեն և տարածվեն կառավարման բոլոր մակարդակներում՝ Հոգաբարձուների խորհրդից մինչև դասախոսական կազմ: Նման մոտեցումը կնպաստի ընդհանուր պատասխանատվության ձևավորմանը, կառավարման գործընթացների փոխկապակցվածությանը և քոլեջի զարգացման ջանքերի առավել համախմբված ու կայուն իրականացմանը անցումային շրջանում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ գործող ռազմավարական ծրագիրը ունի բազմապրոֆիլ ուղղվածություն, որը քոլեջի ներկայիս մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների պայմաններում լիարժեք իրագործելի չէ: Անցումային փուլում կենսական նշանակություն ունի ռազմավարական առաջնահերթությունների հստակ սահմանումը և սահմանափակ ռեսուրսների նպատակային կենտրոնացումը առավել կարևոր ուղղությունների վրա: Այս փուլում նպատակահարմար է, որ անցումային ռազմավարությունը ներառի սահմանափակ, սակայն հստակ թիրախավորված ուղղություններ՝ մասնավորապես

կրթական ծրագրերի կայուն իրականացումը, ուսանողների հավաքագրումն ու պահպանումը, ինչպես նաև գործատուների, բարերարների, սփյուռքի և գործարար շրջանակների հետ համագործակցության զարգացումը և միջազգային ծրագրերում ներգրավումը։ Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նվազեցնել մեկ աշխատակցի վրա բազմաբնույթ և իրարից էապես տարբերվող գործառույթների կուտակումը՝ ապահովելով պատասխանատվության ավելի հստակ բաշխում և գործառույթների իրատեսական իրականացում։ Բացի այդ, նպատակահարմար է սահմանել նվազագույն, սակայն չափելի արդյունքներ, որոնք թույլ կտան ապահովել վերահսկելիություն և արդյունավետություն սահմանափակ մարդկային ռեսուրսներով գործող թիմի պայմաններում։

Այս համատեքստում կարևոր է ապահովել նաև պլանավորում–իրականացում–գնահատում–բարելավում ցիկլի հետևողական կիրառումը, որպեսզի անցումային ռազմավարությամբ սահմանված սահմանափակ և թիրախային ուղղությունները չմնան հատվածային կամ իրավիճակային գործողությունների մակարդակում։ Յուրաքանչյուր գործողություն պետք է պլանավորվի, պարբերաբար գնահատվի չափելի ցուցանիշներով և ստացված արդյունքների հիման վրա բարելավվի՝ ապահովելով կառավարման արդյունավետություն և կայուն առաջընթաց սահմանափակ ռեսուրսների պայմաններում։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը բոլոր մակարդակներում դեռևս ամբողջապես ուղղված չէ հաստատության զարգացմանն ու անցումային փուլը նպատակային հաղթահարելուն, միևնույն ժամանակ՝ սահմանափակ մարդկային ռեսուրսների պայմաններում աշխատակիցների վրա դրված է գործառույթների չափազանց լայն շրջանակ՝ առանց հստակ և չափելի արդյունքների սահմանման, ինչն էապես սահմանափակում է արդյունավետության ապահովումը, ինչպես նաև այն, որ ռազմավարական և գործառնական պլանները լիարժեքորեն չեն համապատասխանեցվել անցումային փուլին, իսկ ՊԻԳԲ ցիկլը կիրառվում է մասնակի և ոչ համակարգված կերպով, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ի չի բավարարում Չափանիշ 2-ի պահանջները։

Եզրակացություն: Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **անբավարար**։

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջը 2024–2025 ուսումնական տարում իրականացնում է հինգ միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ «Հաշվապահական հաշվառում», «Գյուղացիական տնտեսության կազմակերպում», «Տվյալների բազաների մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր», «Քաղաքաշինական կադաստր» և «Դիզայն»։ Կրթական ծրագրերի իրականացումը հիմնված է ՀՀ պետական կրթական չափորոշիչների (ՊԿՉ) վրա, ինչպես նաև քոլեջի ներքին կարգերի ու համապատասխան փաստաթղթային փաթեթների՝ ուսումնական պլանների, մոդուլային ծրագրերի, թեմատիկ պլանների և ուսումնառության նյութերի վրա։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ մոդուլների համար ուսումնառության նյութերը և գնահատման թերթիկները դեռ մշակման փուլում են՝ հաշվի առնելով քոլեջի անցումային ժամանակահատվածը։

Ուսումնական պլանները ներառում են հանրակրթական առարկաներ, մասնագիտական մոդուլային ծրագրեր, ինչպես նաև ընտրովի կամ պահուստային ժամերի

հաշվին ներդրված առարկաներ: Վերջիններիս ներդրումն իրականացվել է ամբիոնների առաջարկների և ուսանողների նախասիրությունների հիման վրա: Մասնավորապես՝ «Քաղաքաշինական կադաստր» մասնագիտության ուսումնական պլանում ընդգրկվել է AutoCAD դասընթացը, իսկ «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» ծրագրում ավելացվել են «Ջերմոցային տնտեսություն» և «Օրգանական գյուղատնտեսություն» դասընթացները: Միաժամանակ վերանայվել է պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը՝ հաշվի առնելով մոդուլների առանձնահատկությունները և բույսերի աճեցման սեզոնայնությունը, ինչը հնարավորություն է տվել ուսանողներին ուսումնաճանաչողական այցեր իրականացնել բույսերի աճի, զարգացման և խնամքի տեխնոլոգիաների կիրառման օպտիմալ ժամանակահատվածում:

Կրթական ծրագրերի նախագծման և փոփոխությունների գործընթացը իրականացվում է ամբիոնների նիստերում: Գործատուների մասնակցությունը դրսևորվում է մասնագիտական առաջարկությունների միջոցով, օրինակ՝ գործատուների կողմից բարձրացվել է գործնական ուսուցման ժամանակի ավելացման անհրաժեշտությունը «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» ՄԿԾ-ում՝ ուսանողների կարողությունների զարգացման նպատակով: Այդ առաջարկության հիման վրա քոլեջը նախատեսում է վերանայել ուսումնական պլանները՝ տեսական և գործնական բաղադրիչների հարաբերակցությունը մոտեցնելով 40/60 մոդելին, ինչը սահմանված է նաև քոլեջի ռազմավարական նպատակներում: Ամբիոնում կրթական ծրագրերի քննարկման ընթացքում ներկայացվել է նաև առաջարկություն՝ «Հողի մշակման համակարգեր» մոդուլի բովանդակության մեջ ներառել հողի մշակման ժամանակակից մեթոդների կիրառում:

Քոլեջի ուսումնական պլաններով նախատեսված են ուսումնական (առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ: Պրակտիկաները կազմակերպվում են պլան-ժամանակացույցի համաձայն, որը հաստատվում է ուսումնական գծով փոխտնօրենի կողմից: Դրանք իրականացվում են ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների շրջանակներում, որոնց համար մշակված են համապատասխան պրակտիկայի ծրագրեր՝ հստակ սահմանված ուսուցման վերջնարդյունքներով, ուսանողներին տրվող առաջադրանքներով և գնահատման գործիքներով, այդ թվում՝ պրակտիկայի օրագրերով:

Փորձագիտական դիտարկումներից պարզ դարձավ, որ որոշ ՄԿԾ-ներում (մասնավորապես «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» կրթական ծրագրում) պրակտիկան հիմնականում իրականացվում է քոլեջի ներսում, որտեղ ուսանողները ներգրավվում են նոր կառուցվող ջերմատնային տնտեսության կառուցման աշխատանքներին, մասնավորապես՝ հողի նախապատրաստում և հարակից գործընթացներ: Թեև այս գործունեությունը նպաստում է որոշակի գործնական հմտությունների ձևավորմանը, այն ամբողջությամբ չի ապահովում ծրագրով սահմանված ուսուցման վերջնարդյունքների ձեռքբերումը՝ գործող և լիարժեք արտադրական միջավայրի բացակայության պատճառով: Խնդիրը արձանագրվել է նաև քոլեջի կողմից, և ուսուցման վերջնարդյունքների ձեռքբերման ապահովման նպատակով ՄՈւՀ-ը ձեռնարկել է պրակտիկաների վայրերի բազմազանեցման քայլեր: Մասնավորապես, վերջին տարում «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նպատակով կնքվել են համագործակցության երկու պայմանագրեր, այդ թվում՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ: Միաժամանակ փորձագիտական այցից պարզվել է, որ ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են նաև ճանաչողական այցեր գործող ջերմատնային տնտեսություններ, սակայն դրանք չունեն հստակ պլանավորում և համակարգում ուսուցման վերջնարդյունքների ապահովման տեսանկյունից: Նմանատիպ այցերի ժամանակ ուսանողները հիմնականում դիտողի դերում եմ:

Պրակտիկայի ավարտին ուսանողները ներկայացնում են իրենց տեսածի և արածի վերաբերյալ: Պրակտիկայի արդյունքները գնահատվում են գործատուի (եթե

համապատասխան գործատու ներգրավված լինում է) և քոլեջի պատասխանատու դասախոսի կողմից։

«Տվյալների բազաների մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր» մասնագիտության շրջանակում գործնական դասերն ու պրակտիկաները կազմակերպվում են գործընկեր «Արմաթ» ճարտարագիտական ընկերությունում։ Գործատու կազմակերպության աշխատակիցները վարում են գործնական պարապմունքները, ղեկավարում են ուսանողների արտադրական և նախաավարտական պրակտիկան, իսկ պրակտիկայի ավարտին ուսանողները ներկայացնում են նախագծային աշխատանքներ։ SS ծրագրում կիրառվում են նաև սիմուլյատորային միջավայրեր, որոնցում ուսանողի աշխատանքի արդյունքը ավտոմատ գնահատվում է համակարգի կողմից, և դրական արդյունքի բացակայության դեպքում ուսանողը չի անցնում իրական սարքավորման հետ աշխատանքի փուլին։

Պրակտիկաների կազմակերպման ընդհանուր մոտեցմամբ յուրաքանչյուր ուսանողի համար նախատեսվում են պատասխանատու անձինք ինչպես քոլեջից, այնպես էլ գործատու կազմակերպությունից։

Փորձագիտական այցից ստացված տվյալների համաձայն՝ գործընկեր կազմակերպությունների թիվը 2024 թ. համեմատ 2025 թ. աճել է՝ վեցից հասնելով ութ կազմակերպության։ Գործընկերների թվում են գյուղատնտեսական, կադաստրային, SS և դիզայնի ոլորտներում գործող կազմակերպություններ («Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ, Green Lane, Դիզայնի պալատ, GIZ ծրագրեր և այլն), որոնց ռեսուրսները օգտագործվում են ինչպես պրակտիկայի, այնպես էլ գործնական պարապմունքների կազմակերպման համար։

Փորձագիտական հանդիպումների ընթացքում արձանագրվել է, որ գործող բոլոր կրթական ծրագրերում ներգրավված են նաև ոլորտում աշխատող մասնագետներ, որոնք մասնակցել են կրթական ծրագրերի նախագծման ու վերանայման գործընթացներին և իրականացնում են դասավանդում ու պրակտիկայի ղեկավարում։

Կրթական ծրագրերի փաթեթներում յուրաքանչյուր մոդուլի թեմայի շրջանակներում սահմանված են ուսումնական վերջնարդյունքներ, դրանց կատարման չափանիշներ, ուսումնառության գործընթացի նկարագրություն, գնահատման մեթոդներ և անհրաժեշտ ուսումնառության ռեսուրսներ։ Դասախոսները կիրառում են բազմազան դասավանդման մեթոդներ՝ հարց ու պատասխան, քննարկումներ, գործնական և լաբորատոր աշխատանքներ։ Միևնույն ժամանակ, խումբը նկատում է, որ քանի որ դասախոսական կազմի մի մասը բուհական կրթական համակարգի ներկայացուցիչներ են, ուսումնառության նյութերը և դասախոսությունները հաճախ ավելի մոտ են բուհի ուսանողների գիտելիքների մակարդակին, ինչը ստեղծում է որոշակի դժվարություններ քոլեջի ուսանողների կողմից այդ գիտելիքները յուրացնելու հարցում։

Դասավանդման մեթոդների ընտրությունը կատարվում է դասախոսների կողմից, իսկ դրանց կիրառման արդյունավետությունը քննարկվում է ամբիոնների նիստերում։ Փորձագիտական հանդիպումներից և ուսանողներին տրվող առաջադրանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ մի շարք մոդուլներում կիրառվում են առաջադրանքներ հետազոտական բաղադրիչով։ «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» մասնագիտության 3-րդ կուրսում «Պտղի և խաղողի արտադրության կազմակերպում» մոդուլի շրջանակներում ուսանողներին հանձնարարվել է համայնքի խնձորենու հիվանդությունների ցուցանիշների հավաքագրում, տվյալների ամփոփում աղյուսակներում և քննարկում լսարանում, ինչպես նաև փորձի իրականացում ցորենի վրա՝ արդյունքների հետագա վերլուծությամբ։

«Հաշվապահական հաշվառում» մասնագիտության «Հաշվապահական հաշվառման հիմունքներ» մոդուլի շրջանակում ուսանողները Excel ծրագրային միջավայրում, ինչպես նաև 1C հաշվապահական ծրագրում կատարում են տարբեր տնտեսական գործառնությունների հաշվառումը։ Մասնավորապես՝ նրանք կազմում են հաշվեկշիռներ, իրականացնում են

դեբետային և կրեդիտային գրառումներ, լրացնում են համապատասխան հաշվառումային ձևաթղթեր և համեմատում հաշվառման արդյունքները տարբեր գործառնությունների համար: «Ձեռներեցություն» մոդուլի շրջանակներում իրականացվել են նաև արտադրանքի փաթեթավորման ուսումնասիրություններ՝ համապատասխան շուկայի պահանջներին:

«Քաղաքաշինական կադաստր» մասնագիտության շրջանակում ուսանողներին տրվել են շինությունների չափագրման գործնական առաջադրանքներ, որոնց մի մասի իրականացման ընթացքում օգտագործվել են ժամանակակից չափագրական գործիքներ և անօդաչու թռչող սարքեր: Ուսանողները իրականացրել են ինչպես սեփական բնակարանի չափագրում, այնպես էլ ուսումնական հաստատության շենքի թիմային չափագրում՝ հետագա վրիպակների վերլուծությամբ և մասնագետների աշխատանքի հետ համադրությամբ:

Քոլեջում ուսանողների գնահատման գործընթացը կազմակերպվում է 2024–2025 ուսումնական տարում ներդրված «ՇՏՀ միջին մասնագիտական կրթության ուսանողների ուսումնառության կարգի» համաձայն: Գնահատման ձևերը ներառում են տարբերակված ստուգարք, չտարբերակված ստուգարք, կիսամյակային քննություն և պետական որակավորման քննություն: Մասնագիտական մոդուլների ընթացիկ ստուգումների օրինակներից է «Քարտեզագրում» մոդուլում կիրառվող թեստային քննությունը, որտեղ ընդգրկված են բազմընտրանի, լրացնելու, բաց հարցեր և համապատասխանեցման առաջադրանքներ: Մոդուլների արդյունքների ամփոփումը իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, իսկ որոշ ծրագրերում նախատեսված են նախագծային/ավարտական աշխատանքներ, որոնց արդյունքները ներառվում են վերջնական գնահատականների մեջ: Միևնույն ժամանակ, ուսանողներին տրվող առաջադրանքների և գնահատման թերթիկների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ընթացիկ և ամփոփիչ գնահատումները հիմնականում կենտրոնացած են տեսական գիտելիքների, քան գործնական կարողությունների գնահատման վրա:

ՊԿՉ-ների տեղայնացումը քոլեջում իրականացվել է ըստ «ՇՏՀ ՄԿԾ-ների մշակման գործընթացներում արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ» և «ՇՏՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգ» փաստաթղթերի հիման վրա: Գործընթացի իրականացման նպատակով ձևավորվել են աշխատանքային խմբեր, որոնցում ընդգրկվել են քոլեջի ներքին (դասախոսներ, վարչական անձնակազմ) և արտաքին շահակիցները (գործատուներ, ոլորտային մասնագետներ): Սակայն անհրաժեշտ է նշել, որ այս ընթացակարգով ոչ բոլոր ՄԿԾ-ների տեղայնացումն է իրականացվել, այն ինստիտուցիոնալ բնույթ չունի:

Քոլեջը ներկայում դեռևս չի իրականացրել ՄԿԾ-ների համեմատական վերլուծություն այլ ՄՈՒՀ-երի ՄԿԾ-ների հետ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ձեռնարկում է քայլեր որոշ ՄԿԾ-ների տեղայնացման ուղղությամբ՝ ներգրավելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին: Միևնույն ժամանակ խումբը նշում է, որ այս մոտեցումը նպատակահարմար է դարձնել ինստիտուցիոնալ և կիրառել բոլոր ՄԿԾ-ներում, ինչը կնպաստի կրթական ծրագրերի մրցունակության բարձրացմանը և շարունակական բարելավմանը:

Ինչ վերաբերում է ՄԿԾ-ներում տեսական և գործնական բաղադրիչների հարաբերակցության վերանայմանը, ապա փորձագիտական խումբը նշում է, որ դա կարող է նպաստել ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Միաժամանակ ընդգծվում է, որ քոլեջը պետք է առավել հետևողական պատրաստվի այս գործընթացին՝ ապահովելով գործնական աշխատանքների համար անհրաժեշտ նյութական ռեսուրսները, ինչպես նաև դասախոսների կողմից գործնական կարողություններ զարգացնող առաջադրանքների մշակումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ տեսական և գործնական բաղադրիչի հավասարակշռված համադրումը, ինչպես նաև նյութի փուլային և հասանելի

ներկայացումը կնպաստեն ուսանողների առաջընթացին և ծրագրերով սահմանված կարողությունների և հմտությունների արդյունավետ ձևավորմանը:

Ինչ վերաբերում է գնահատմանը, ապա այն իրականացվում է հստակ սահմանված ընթացակարգի հիման վրա, ինչը նպաստում է գնահատման թափանցիկությանը: Միևնույն ժամանակ, ուսումնառության վերջնարդյունքների լիարժեք ապահովման տեսանկյունից առավել արդյունավետ կլինի, եթե գնահատման գործիքակազմում ավելի ընդգծված տեղ հատկացվի գործնական կարողությունների, մասնագիտական հմտությունների և իրական աշխատանքային իրավիճակներում գիտելիքների կիրառման գնահատմանը:

Փորձագիտական խմբի գնահատմամբ՝ քոլեջում առկա են դրական գործելակերպերպ առանձին ՄԿԾ-ների շրջանակում, հատկապես SS ոլորտում, որտեղ գործատուների ակտիվ ներգրավվածությունը պրակտիկ ուսուցման կազմակերպման և ուսանողների գնահատման գործընթացներում նպաստում է պրակտիկ բաղադրիչի արդյունավետ իրականացմանը և ուսումնառության վերջնարդյունքների առավել նպատակային ձևավորմանը: Խումբը կարևորում է, որ հաստատությունը համակարգված և հետևողական միջոցառումներ իրականացնի բոլոր ՄԿԾ-ների շրջանակում պրակտիկայի վայրերի բազմազանության ապահովման ուղղությամբ, ինչպես նաև ընդլայնի գործատուների ներգրավվածությունը պրակտիկ ուսուցման և արդյունքների գնահատման գործընթացներում: Նման մոտեցումը կնպաստի ուսումնառության վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերմանը և ծրագրային նպատակների արդյունավետ իրագործմանը:

Խումբը դրական է գնահատում ուսուցման մեթոդների բազմազանությունը, այդ թվում՝ հետազոտական, նախագծային և գործնական աշխատանքների իրականացումը տարբեր մոդուլներում: Փորձագիտական խումբը նաև գտնում է, որ դասավանդման գործընթացի արդյունավետության հետագա բարձրացման և ուսումնառության վերջնարդյունքների առավել լիարժեք ձեռքբերման տեսանկյունից նպատակահարմար կլինի դասավանդման բովանդակությունն ու մեթոդական մոտեցումները առավել մոտեցնել միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին և ոլորտի կիրառական պահանջներին: Այս մոտեցումը հնարավորություն կտա պատրաստել ՈՒՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան առավել կարողունակ և գործնական կարողություններ ունեցող մասնագետի:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՊԿՉ-ների և կրթական ծրագրերի տեղայնացման գործընթացները իրականացվում են հաստատության կողմից սահմանված կարգավորող փաստաթղթերի հիման վրա և կազմակերպվում են աշխատանքային խմբերի միջոցով՝ ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ: Նման մասնակցային մոտեցումը դրական նախադրյալ է կրթական ծրագրերի բովանդակությունը ոլորտային պահանջներին և աշխատաշուկայի ակնկալիքներին համապատասխանեցնելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը նպատակահարմար է համարում, որ նույն մոտեցումները և ընթացակարգերը համակարգված ձևով կիրառվեն բոլոր ՄԿԾ-ների տեղայնացման գործընթացում: Սա կապահովի ծրագրերի մշակման միասնական գործելակերպ և կօգնի, որ բոլոր ՄԿԾ-ները լինեն աշխատաշուկայի պահանջներին նպատակային և համաչափ ադապտացված, իսկ ծրագրերով սահմանված վերջնարդյունքները՝ առավել կիրառելի և պահանջված ոլորտում:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջը իրականացնի ՄԿԾ-ների բենչմարքինգ համանման մասնագիտությունների գծով այլ տեղական և միջազգային ՄՈՒՀ-երի ՄԿԾ-ների հետ: Համադրական վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտել բովանդակային, կառուցվածքային և մեթոդական լավագույն լուծումները, գնահատել սեփական ծրագրերի համապատասխանությունը ոլորտային և կրթական արդի միտումներին:

Եզրահանգում: **Եզրահանգում.** Հաշվի առնելով, որ քոլեջը՝ լինելով նորաստեղծ ուսումնական հաստատություն, արդեն իսկ ստեղծել է անհրաժեշտ նախադրյալներ ՊԿՉ-ների ադապտացման համար՝ դրանք մոտեցնելով գործատուների և աշխատաշուկայի

պահանջներին, կիրառում է դասավանդման և գնահատման համակարգված մեթոդներ, որոնք նպաստում են ուսանողների ուսումնառության վերջնարդյունքների ձևավորմանը, ձևավորել է ոլորտային գործընկերների հետ համագործակցության որոշակի ցանց և ունի պրակտիկայի իրականացման ու գնահատման դրական փորձեր, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՀ-ի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

Քոլեջում միջին մասնագիտական կրթությունը կազմակերպվում է հիմնական և միջնակարգ կրթության հիմքով՝ մրցութային հիմունքներով, ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների ցանկին և կիրառվող իրավական ակտերին համապատասխան: 2024–2025 ուսումնական տարում քոլեջում սովորում է 142 ուսանող, որոնց զգալի մասը Արցախից տեղահանված ուսանողներ են:

Քոլեջի մասին տեղեկատվությունը և ընդունելության կազմակերպման կարգը հասանելի են Շուշիի տեխնոլոգիական համալսարան հիմնադրամի պաշտոնական կայքում գործող «Ուսանող» բաժնի «Ընդունելություն» ենթաբաժնում, որտեղ տեղադրվում են տվյալ տարվա մասնագիտությունների ցանկը, ընդունելության կարգը, պահանջվող փաստաթղթերի մասին տեղեկությունները և ընդունելության արդյունքները: Տպագրվում և տարածվում են նաև բուկլետներ ու գովազդային պաստառներ, տեղեկատվությունը տեղադրվում է քոլեջի ֆեյսբուքյան էջում: Քոլեջը նախատեսում է առաջիկա ուսումնական տարում այցելություններ իրականացնել դպրոցներ՝ քոլեջի մասնագիտությունները և կրթական հնարավորությունները ներկայացնելու նպատակով:

Փորձագիտական այցի ընթացքում քոլեջի ներկայացուցիչների հետ քննարկումներից պարզվեց, որ վերջին ընդունելությունների շրջանում որոշ մասնագիտությունների, հատկապես «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» ծրագրի դիմորդների հոսքը նվազման միտում ունի, որը ըստ շահակիցների, պայմանավորված է տվյալ ոլորտի նկատմամբ հետաքրքրության անկմամբ քաղաքային միջավայրում:

Վերջին տարիների տվյալների վերլուծությունից պարզվել է, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառը ցածր առաջադիմությունն է: Հեռացումների կանխարգելման նպատակով ուսումնամեթոդական բաժինը կազմակերպում է պարբերական հանդիպումներ և քննարկումներ կուրսղեկների հետ՝ ուսանողների առաջադիմության միտումները դիտարկելու և ռիսկային ուսանողների հետ աշխատանք պլանավորելու համար: Բացակայությունների վերահսկման մասով կիրառվում է սահմանված շեմ. 60 ժամից ավելի չհիմնավորված բացակայությունների դեպքում ուսանողը ենթարկվում է խիստ նկատողության, իսկ հետագա խախտումների պարագայում կարող է հեռացվել քոլեջից, որի մասին տեղեկացվում են նաև ծնողները:

Քոլեջում ուսանողների կրթական կարիքների գնահատումը և հետադարձ կապի հավաքագրումը իրականացվում է որակի ապահովման ստորաբաժանման միջոցով՝ հարցաթերթիկների, ֆոկուս-խմբային քննարկումների և ուսանողների հետ հանդիպումների տարբերակներով: Հարցումների արդյունքները ամփոփվում են և ներկայացվում տնօրենին ու

մանկավարժական խորհրդին: Հարցաթերթիկների միջոցով ուսանողները գնահատել են դասախոսների աշխատանքը և կրթական միջավայրը, որի արդյունքում, մասնավորապես, արձանագրվել են որոշ դասախոսների հետ կապված խնդիրներ, և եղել են անձնակազմի փոփոխություններ՝ ուսանողների կարծիքների հիման վրա:

Ուսանողների կողմից վերհանված հիմնական խնդիրները վերաբերում են լսարանների վերանորոգման, համակարգիչների թվի ավելացման, անվճար Wi-Fi հասանելիության և գրադարանի ժամանակակից մասնագիտական գրականությամբ համալրման անհրաժեշտությանը: Քոլեջը նշված կարիքների բարձրաձայնմանն ընդառաջ քայլեր իրականացնում է բարերարների աջակցության միջոցով (լսարանների կահավորում, SS սարքավորումների ձեռքբերում, մասնագիտական գրականության նվիրատվություններ):

Քոլեջում գործարկվում է ուսանողական բողոքարկման և առաջարկությունների մեխանիզմ՝ «բողոքների և առաջարկությունների արկղի» տեսքով, որը նախատեսված է ուսանողների կողմից տարբեր հարցերի վերաբերյալ անհատական ու անանուն կարծիքների փոխանցման համար: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ այս եղանակով մինչ օրս որևէ բողոք կամ առաջարկություն չի գրանցվել:

Ուսանողների հետադարձ կապի հավաքագրման լրացուցիչ միջոց են նաև ուսանողների և դասախոսների ներգրավմամբ ստեղծված խմբային հաղորդակցման հարթակները (Telegram ալիքներ, սոցիալական ցանցերի խմբեր), որոնք հիմնականում ծառայեցնում են կազմակերպչական տեղեկատվության, տնային առաջադրանքների և ընթացիկ հայտարարությունների տարածման նպատակներին:

Ուսանողների համար նախատեսված են նախաքննական խորհրդատվություններ՝ ըստ նախօրոք մշակված ժամանակացույցի: Քննություններին նախորդող խորհրդատվական հանդիպումները իրականացվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ առարկայական մակարդակով: Ուսանողները հնարավորություն ունեն ստանալու լրացուցիչ պարզաբանումներ ուսումնական նյութի վերաբերյալ:

Քոլեջում գործում է կարիերայի ստորաբաժանում, որի շրջանակում պահպանվում է նախորդ տարիների շրջանավարտների տվյալների սահմանափակ բազա (մասնավորապես՝ 2021–2022 թթ. շրջանավարտների վերաբերյալ): Շրջանավարտների հետ կապը հիմնականում պահպանվում է՝ WhatsApp խմբերի ձևաչափով, որտեղ շրջանառվում են նաև աշխատաշուկայում առկա որոշ թափուր հաստիքների վերաբերյալ տեղեկություններ, որոնք փոխանցվում են գործատուների կամ արտաքին կապերի պատասխանատուի կողմից:

Փորձագիտական այցի արդյունքներով պարզ է դարձել, որ քոլեջում ներկայումս չի իրականացվում շրջանավարտների զբաղվածության համակարգային և կանոնավոր հետագծում, իսկ առկա տվյալները մասնակի են և չեն ապահովում ամբողջական քանակական ու որակական պատկեր զբաղվածության դինամիկայի վերաբերյալ: Քոլեջը նախատեսում է ստեղծել նոր, ամբողջական շրջանավարտների բազա, որը կներառի ինչպես Արցախում ուսումնառած և այժմ վերականգնված ուսանողների տվյալները, այնպես էլ նոր ընդունված կուրսերի մասին տեղեկատվությունը՝ ապահովելով հետագծման գործընթացի շարունակականություն և ամբողջականություն:

Քոլեջում ուսանողների սոցիալ-տնտեսական իրավիճակը հաշվառելու նպատակով սահմանված են մատչելի վարձավճարներ, քանի որ ուսանողների զգալի մասը Արցախից տեղափոխված է: Գիտական խորհրդի որոշմամբ յուրաքանչյուր կիսամյակում երկու գերազանց առաջադիմությամբ ուսանող ստանում է 50% վարձավճարի զեղչ, իսկ քոլեջի աշխատակիցների երեխաների համար նշանակվում է նույն չափաքանակի զեղչ: Վարձավճարների հասանելիության ապահովման նպատակով քոլեջը համագործակցում է բարերարների հետ . մասնավորապես, «Դիզայն» կրթական ծրագրի 14 ուսանողի վարձավճարը փոխհատուցվել է բարեգործական աջակցությամբ:

Քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդ (ՈւԽ), որը տարեկան աշխատանքային պլանների հիման վրա կազմակերպում է մշակութային ու սոցիալական միջոցառումներ

(Նորամուտ, Գարուն թեմատիկ միջոցառումներ և այլ ծրագրեր), ինչպես նաև ուսանողների ներգրավմամբ կամավորական աշխատանքներ (ծառատունկ Armenia Tree Project-ի հետ, մաքրման և հասարակական աշխատանքներ, մասնակցություն տարբեր նախաձեռնություններին)։ ՈւԽ նախագահի ընտրությունը իրականացվում է փակ քվեարկությամբ՝ ըստ հաստատված կանոնակարգի։ ՈւԽ-ն ունի Telegram ալիք, որտեղ հրապարակվում են հայտարարություններ և տարբեր տեղեկատվություն, ալիքին միացած է մոտ 60 ուսանող։ ՈւԽ անդամները ներգրավված են նաև քոլեջի կառավարման մարմիններում. ուսանողները ներառված են Հանձնախմբի և ՀԽ-ի կազմում՝ հասնելով համապատասխան տարիքին (18 տարին լրացած ուսանողները)։

Քոլեջում ուսանողները ներգրավված են տարբեր արտաուսումնական և ուսումնամշակութային ծրագրերի։ Մասնավորապես՝ SS մասնագիտության ուսանողները մասնակցել են հաքաթոնին, որի շրջանակում մշակել են առաջին բուժօգնության վերաբերյալ վեբ կայքի նախագիծ։ Քոլեջը համագործակցում է մի շարք ուսումնական հաստատությունների հետ, ինչի արդյունքում իրականացվել են համատեղ սպորտային մրցույթներ, որոնցում ներգրավվել են տարբեր մասնագիտությունների ուսանողներ։

Ուսանողները ներգրավվում են նաև կամավորական գործունեության մեջ . նրանք մասնակցել են ծառատունկի աշխատանքներին «Armenia Tree Project» կազմակերպության հետ, ինչպես նաև մի շարք հասարակական նախաձեռնությունների՝ մաքրման, միջոցառումների կազմակերպման և համայնքային աջակցության ուղղությամբ։ Այս ակտիվությունները իրականացվում են Ուսանողական խորհրդի համակարգմամբ և ներառվում են նրա տարեկան աշխատանքային պլաններում։

Քոլեջում կրթական, խորհրդատվական և օժանդակող ծառայությունների արդյունավետությունն ուսումնասիրվում է ուսանողների պարբերական հետադարձ կապի հիման վրա։ Հարցումների արդյունքներով արձանագրված է մի շարք ենթակառուցվածքային և ռեսուրսային խնդիրների առկայություն, որոնք կապված են լսարանային պայմանների բարելավման, տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորումների համալրման, ինտերնետ կապի ապահովման և գրադարանի արդիականացման հետ։ Այս տվյալները ներառվել են որպես բարելավման ուղղություններ և քննարկվել են կառավարման համապատասխան ենթակառուցվածքներում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ապահովում է ընդունելության գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն տարբեր հարթակներով (կայք, սոցիալական ցանցեր, տպագիր նյութեր), ինչը նպաստում է դիմորդների ընդհանուր իրազեկվածությանը։ Միևնույն ժամանակ խումբը գտնում է, որ որպես նորաբաց միջին մասնագիտական կրթական հաստատություն՝ քոլեջի համար կարևոր է առավել ակտիվ և համակարգված կերպով պլանավորել և իրականացնել դպրոցական այցեր և ուղղորդման միջոցառումներ, քանի որ դա կարող է էական ազդեցություն ունենալ դիմորդների թվի աճի և մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության բարձրացման վրա։

Փորձագիտական խումբը փաստում է, որ ուսանողների հեռացումների կանխարգելման ուղղությամբ քոլեջում կիրառվում են ամրագրված մեխանիզմներ՝ առաջադիմության մոնիթորինգ, բացակայությունների վերահսկում և կուրսղեկների ներգրավում, որոնք թույլ են տալիս ժամանակին հայտնաբերել ռիսկային ուսանողներին։ Միևնույն ժամանակ խումբը կարևորում է, որ հետագայում քոլեջում իրականացվեն վերլուծություններ այն մասին, թե իրականացված միջամտությունները ինչ ազդեցություն են ունեցել ուսանողների առաջադիմության կամ հեռացումների նվազեցման վրա, ինչի արդյունքում գործընթացի արդյունավետությունը հնարավոր կլինի գնահատել։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում են ուսանողների հետադարձ կապի հավաքագրման տարբեր գործիքներ (հարցումներ, ֆոկուս-խմբեր, հանդիպումներ), և դրանց հիման վրա արձանագրվել են հստակ կառավարչական որոշումներ, այդ թվում՝ դասախոսական կազմի փոփոխություններ։ Միևնույն ժամանակ խումբը գտնում է,

որ հարցումների արդյունքների ամփոփումը չի ուղեկցվում համակարգված վերլուծությամբ և չափելի ցուցանիշներով, ինչը սահմանափակում է ուսանողական աջակցության արդյունավետության գնահատումը ժամանակի ընթացքում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողների կողմից բարձրացված ենթակառուցվածքային և ռեսուրսային խնդիրներին արձագանքվել է բարերարական աջակցության ներգրավմամբ՝ ապահովելով լսարանների կահավորում և SS ռեսուրսների համալրում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում կազմակերպվում են նախաքննական խորհրդատվություններ և ուսանողները հնարավորություն ունեն անհատական հարցերով դիմելու ինչպես դասախոսներին, այնպես էլ վարչական անձնակազմին: Միևնույն ժամանակ խումբը արձանագրում է, որ խորհրդատվություններին մասնակցության մակարդակի և դրանց արդյունավետության վերաբերյալ համակարգված տվյալներ և վերլուծություններ չեն պահպանվում:

Փորձագիտական խումբը արձանագրում է, որ կարիերայի ծառայության գործունեությունը ներկայումս սահմանափակվում է շրջանավարտների հետ ոչ ֆորմալ կապի պահպանմամբ և թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվության փոխանցմամբ: Միևնույն ժամանակ խումբը գտնում է, որ շրջանավարտների զբաղվածության կանոնավոր հետագծման, մասնագիտությունների կտրվածքով վերլուծությունների և տվյալների բազայի համակարգային կառավարման բացակայությունը սահմանափակում է կարիերային աջակցության ազդեցության գնահատումը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդը, որը կազմակերպում է մշակութային, սոցիալական և կամավորական միջոցառումներ և ապահովում է ուսանողների ներկայացվածությունը կառավարման որոշ մարմիններում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողները ներգրավվում են արտաուսումնական և մասնագիտական ուղղվածություն ունեցող նախաձեռնություններում: Միևնույն ժամանակ խումբը նշում է, որ այդ ակտիվությունների արդյունքների, ուսանողների ընդգրկվածության և ձեռքբերումների վերաբերյալ վերլուծություններ չեն իրականացվում, ինչի արդյունքում դրանց կրթական ազդեցությունը լիարժեք չի գնահատվում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ապահովված են ընդունելության և ուսանողների իրազեկման հիմնական մեխանիզմները, գործում են ուսանողների կրթական, սոցիալական և կազմակերպչական աջակցության գործիքներ, իրականացվում է ուսանողների հետադարձ կապի հավաքագրում և արձագանքում, ինչպես նաև ձևավորված են ուսանողական ինքնակառավարման և արտաուսումնական ներգրավվածության հարթակներ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է Չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՀ-ի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Քոլեջի 2025–2029 թվականների ռազմավարական ծրագրով սահմանվել է նպատակ՝ ապահովել կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական

որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորումն ու զարգացումը (ՌԾ նպատակ 4)։ Նպատակի իրագործման շրջանակում նախատեսված են դասախոսական կազմի համալրման, մասնագիտական կարողությունների զարգացումների և որակի գնահատման ուղղված քայլեր։

Քոլեջում դասախոսական կազմի ընտրությունն ու համալրումը իրականացվում է «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման քաղաքականություն և ընթացակարգ» կարգի համաձայն։ Փորձագիտական այցի ընթացքում պարզվել է, որ թափուր հաստիքների համալրման նպատակով հրապարակվել են հայտարարություններ, սակայն որոշ մասնագիտությունների գծով դիմորդներ չեն եղել, մասնավորապես SS ոլորտում առկա է մասնագետների ներգրավման խնդիր։

Ներկայումս քոլեջում դասավանդում է 37 դասախոս, որոնցից 6-ը հանդիսանում են գործատու-դասախոսներ SS, ագրոնոմիայի, կադաստրի և ճարտարապետաշինարարական կրթական ծրագրերում։ Դասախոսական կազմում ընդգրկված են նաև քոլեջի 5 շրջանավարտներ, որոնք ներգրավվել են դասավանդման գործընթացում։ Բոլոր դասախոսներն ունեն բարձրագույն կրթություն, որոնցից 11-ը՝ գիտական աստիճան։ Դասախոսների զգալի մասը համատեղությամբ աշխատողներ են (29 դասախոս)։

Դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները սահմանված են պետական կրթական չափորոշիչներով։

Դասախոսների կողմից դասավանդվող մոդուլների քանակը տատանվում է 1-ից մինչև 7 մոդուլի սահմաններում։

2022 թվականին հաստատվել է դասախոսների մասնագիտական և հետազոտական գործունեության գնահատման ընթացակարգը, որի շրջանակում կիրառվում են մի քանի մեխանիզմներ՝ դասալսումներ, ուսանողների կողմից դասախոսների գնահատում հարցումների միջոցով, կրթական կարիքների և գոհունակության մշտադիտարկում, ինչպես նաև դասախոսների գիտական հրապարակումների և ուսումնական ձեռնարկների առկայության հաշվառում։

Քոլեջում գործում է «Դասալսումների անցկացման կարգ» (2025 թ.), իրականացվում են դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվում են և հիմք են հանդիսանում դասախոսների վերապատրաստման կարիքների բացահայտման, ինչպես նաև կիրառվող արդյունավետ մեթոդների ճանաչման համար։ Միևնույն ժամանակ, փոխադարձ դասալսումների համակարգված և պլանավորված իրականացում չի արձանագրվել, ինչպես նաև բացակայում են դասալսումների տարեկան ժամանակացույցերը։

Դասախոսական կազմի մասնագիտական զարգացման ֆինանսավորում քոլեջի բյուջեում նախատեսված չէ՝ ֆինանսական սահմանափակումների պատճառով։ Այնուամենայնիվ, առանձին դասախոսներ մասնակցել են արտաքին կազմակերպությունների կողմից իրականացվող վերապատրաստումներին։ Մասնավորապես, 2024 թվականին մեթոդական վերապատրաստումներին մասնակցել են 3 դասախոս, իսկ 2025 թվականին մասնագիտական վերապատրաստման՝ 2 դասախոս։ Դասախոսները դիմել են նաև ՄԿՈՒԶԱԿ-ի վերապատրաստումներին մասնակցելու համար, սակայն դեռևս հրավերներ չեն ստացել։

Դասախոսական կազմն ունի երիտասարդացման միտում, միջին տարիքը մոտ 48-ն է։ Քոլեջում առկա է դասախոս թեկնածուների բազա, հիմնականում Արցախի նախկին աշխատակիցներից, որոնք նախկինում դասավանդել են և դիտարկվում են որպես ներուժ դասախոսական կազմի համալրման համար։

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների մի մասը, իրենց հիմնական գործառույթների հետ զուգահեռ, ներգրավված են նաև դասավանդման գործընթացում։ Ուսումնաօժանդակ և վարչական կազմի գործառույթները սահմանված են աշխատանքային պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով։

Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ քոլեջում իրականացվում են դասախոսների մեթոդական աջակցություն և մենթորություն, մասնավորապես սկսնակ դասախոսների համար: Ներքին փորձի փոխանակման միջոցառումները կրում են հատվածական բնույթ և համակարգված չեն կանոնակարգված փաստաթղթերով կամ տարեկան պլաններով:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ դասախոսական կազմի զգալի մասը ունի բուհական կրթական միջավայրում ձևավորված դասավանդման փորձ, ինչի արդյունքում առանձին դեպքերում առաջանում է մեթոդական հարմարեցման անհրաժեշտություն՝ միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին և ուսանողների պատրաստվածության մակարդակին համարժեք դասավանդում ապահովելու նպատակով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը, լինելով նորաստեղծ հաստատություն, արդեն իսկ ռազմավարական մակարդակում սահմանել է դասախոսական կազմի ձևավորման և զարգացման հստակ նպատակ, ինչպես նաև ներդրել է դասախոսների ընտրության և համալրման կարգավորված ընթացակարգ: Դրական է նաև, որ դասավանդման գործընթացում ներգրավված են ոլորտում գործող գործատու-մասնագետներ և քոլեջի շրջանավարտներ, ինչը նպաստում է կրթական ծրագրերի կիրառական ուղղվածության և մասնագիտական փորձի փոխանցմանը: Միևնույն ժամանակ, համատեղությամբ աշխատող դասախոսների մեծ մասնաբաժինը և առանձին մասնագիտությունների գծով (մասնավորապես SS ոլորտում) մասնագետների ներգրավման դժվարությունները կարող են սահմանափակել դասավանդման կայունությունն ու ծրագրերի շարունակական զարգացման ներուժը: Այս համատեքստում փորձագիտական խումբը կարևորում է դասախոսական կազմի կայունացման, երիտասարդ կադրերի նպատակային ներգրավման և գործատու-դասախոսների մասնակցության ընդլայնման գործառնական քայլերի իրականացումը:

Խումբը դրական է գնահատում, որ քոլեջի դասախոսական կազմի զգալի մասը ունի բարձր մասնագիտական որակավորում և ոլորտային գործնական փորձ, ինչպես նաև գործատու-դասախոսների ներգրավվածություն, ինչը նպաստում է տեսական գիտելիքների և գործնական հմտությունների արդյունավետ համադրմանը: Սա հատկապես արտահայտվում է մասնագիտական մոդուլների, արտադրական և դաշտային պարապմունքների իրականացման ընթացքում, որոնք կազմակերպվում են նաև գործատուների հարթակներում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ դասախոսական կազմի բուհական կրթական միջավայրում ձևավորված փորձը, չնայած մասնագիտական արժեքին, միջին մասնագիտական կրթության պայմաններում պահանջում է նպատակային մեթոդական հարմարեցում: Առկա իրավիճակում դասավանդման մոտեցումները լիարժեք չեն արտացոլում ՄԿՈՒՀ առանձնահատկությունները, ինչի հետևանքով ուսումնական գործընթացի արդյունավետությունը որոշ դեպքերում սահմանափակվում է: Խումբը դա դիտարկում է որպես բարելավման հնարավորություն՝ դասախոսների մեթոդական կարողությունների զարգացման միջոցով ուսանողակենտրոն և կիրառական ուսուցման ուժեղացման համար:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում ներդրված են դասախոսների աշխատանքի գնահատման մի քանի մեխանիզմներ՝ ներառյալ դասալսումները, ուսանողների հարցումները և կարիքների մշտադիտարկումը: Միաժամանակ արձանագրվում է, որ փոխադարձ դասալսումների համակարգված իրականացում և դրանց տարեկան պլանավորում ներկայումս բացակայում են, ինչի հետևանքով այդ գործիքը ամբողջապես չի իրացնում իր զարգացմանն ուղղված ներուժը:

Խումբը արձանագրում է, որ դասախոսների մասնագիտական և մեթոդական զարգացման գործընթացը հիմնականում հիմնվում է անհատական նախաձեռնությունների և արտաքին հնարավորությունների վրա, քանի որ քոլեջի բյուջեում նպատակային ֆինանսավորում նախատեսված չէ: Հաշվի առնելով քոլեջի նորաստեղծ լինելը և ֆինանսական

սահմանափակումները՝ ՄՈՒՀ-ը կարիք ունի զարգացնելու ներքին կարողությունների վրա հիմնված մեխանիզմներ՝ կազմակերպելով ներքին սեմինարներ, մեթոդական քննարկումներ, փորձի փոխանակման հանդիպումներ և փոխադարձ դասալսումներ, ինչպես նաև խթանի գործատու կազմակերպությունների մասնագետների ներգրավվածությունը դասավանդման մեթոդների և կիրառական հմտությունների փոխանցման գործընթացում: Նման մոտեցումը կաջակցի դասախոսների մեթոդական կարողությունների աստիճանական զարգացմանը և դասավանդման առավել համապատասխանեցմանը միջին մասնագիտական կրթության պահանջներին:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում իրականացվում են մենթորություն և մեթոդական աջակցություն սկսնակ դասախոսների համար, սակայն արձանագրում է, որ ներքին փորձի փոխանակման միջոցառումները կրում են հատվածական բնույթ և չեն ամրագրված միասնական փաստաթղթային կամ պլանային հենքով:

Միևնույն ժամանակ խումբը դրական է գնահատում, որ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների մի մասը ներգրավված է նաև դասավանդման գործընթացում, ինչը որոշ դեպքերում նպաստում է կառավարման և ուսումնական գործընթացների փոխկապվածությանը, սակայն պահանջում է գործառույթների բաշխման և ծանրաբեռնվածության շարունակական վերահսկում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը ունի սահմանված քաղաքականություններ դասախոսական կազմի ձևավորման և գնահատման համար, ներգրավում է գործատու-դասախոսների, ապահովում է տեսական և գործնական բաղադրիչների կապը, իրականացնում է դասալսումներ և ուսանողական հետադարձ կապի հավաքագրում, ինչպես նաև քայլեր է ձեռնարկում դասախոսների մասնագիտական զարգացման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՀ-ի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Հետազոտական գործունեությունը քոլեջում ամրագրված է որպես ռազմավարական առաջնահերթություն և ներառված է ՇՏՀ-ի ՄՄԿԾ-ի զարգացման 2025–2029 թթ. ռազմավարական ծրագրում: Քոլեջում մշակվել են հետազոտության զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, որոնցում սահմանված են հետազոտական աշխատանքների ուղղությունները և պլանավորվող գործողությունները:

Քոլեջի հետազոտական գերակա ուղղություններն են կենսատեխնոլոգիան, հողագիտությունը, ագրոքիմիան, բույսերի պաշտպանությունը, քաղաքաշինությունը (այդ թվում՝ ջրային համակարգերը), ճարտարապետությունը, ինժեներական էկոնոմիկան և կառավարումը, տեղեկատվական տեխնոլոգիաները և կապը:

Քոլեջում ուսանողների հետազոտական գործունեությունը հիմնականում իրականացվում է մասնագիտական մոդուլների շրջանակներում՝ գործնական աշխատանքների, նախագծային առաջադրանքների և արտադրական պրակտիկաների միջոցով: Հետազոտական բնույթի աշխատանքներ իրականացվում են նաև ռեֆերատների և ինքնուրույն աշխատանքների ձևաչափով, որոնց թեմաների ընտրության հարցում

ուսանողները ունեն ինքնուրույնություն: Միևնույն ժամանակ, քոլեջում դեռևս սահմանված չեն ուսանողական հետազոտական աշխատանքների իրականացման միասնական մեթոդական ցուցումներ և ներկայացման կարգեր:

Ուսանողների հետազոտական գործունեության իրականացման ընթացքում ներգրավվում են նաև գործընկեր կազմակերպությունները: Մասնավորապես՝ «Գյուղացիական տնտեսության կազմակերպում» կրթական ծրագրի ուսանողները համագործակցել են Armenia Tree Project կազմակերպության հետ՝ ծառատնկման, հողային կառավարման և էկոլոգիական մոտեցումների ուսումնասիրման ուղղությամբ: «Տվյալների բազաների մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր» կրթական ծրագրի ուսանողները համագործակցել են «Արմաթ» լաբորատորիաների հետ՝ տվյալների կառավարման և տեղեկատվական անվտանգության լուծումների մշակման նպատակով: «Քաղաքաշինական կադաստր» կրթական ծրագրի ուսանողները GeoContrast ընկերության հետ իրականացրել են դաշտային չափագրումներ և տարածքային պլանավորման աշխատանքներ: «Դիզայն» կրթական ծրագրի ուսանողները համագործակցել են Fashion and Design Chamber of Armenia կազմակերպության հետ՝ էկոդիզայնի և հայկական ավանդական հագուստի վերաիմաստավորման նախագծերի շրջանակում: «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի ուսանողները Step Forward ՍՊԸ-ի հետ իրականացրել են ֆինանսական վերլուծական և հաշվետվությունների մշտադիտարկման աշխատանքներ:

Քոլեջի ուսանողները մասնակցել են նաև արտալսարանային, նախագծային և նորարարական նախաձեռնություններում: Մասնավորապես, ուսանողական թիմը մասնակցել է Ծաղկաձորում անցկացված Ուսանողական երկրորդ հաքաթոնին՝ ներկայացնելով առաջին բուժօգնության թեմայով նախագծային լուծում:

Դասախոսական կազմը ակտիվորեն իրականացնում է գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեություն: Վերջին հինգ տարիների ընթացքում հրապարակված մենագրությունների, դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների և գիտական հոդվածների ընդհանուր թիվն աճել է մոտ 34.9%-ով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկայումս քոլեջում ուսանող–դասախոս համատեղ հետազոտական նախագծեր չեն իրականացվում:

Քոլեջում ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության խթանումը հիմնականում իրականացվում է ոչ նյութական մեխանիզմների միջոցով: Դասախոսների մասնագիտական ակտիվությունը խրախուսվում է գիտական հրապարակումների հաշվառմամբ, մեթոդական ձեռնարկների մշակմանն աջակցությամբ և կառավարչական մակարդակով դրական գնահատմամբ: Ուսանողների դեպքում հետազոտական բնույթի աշխատանքները ներառված են ուսումնառության ընթացիկ գնահատման համակարգում և ազդում են վերջնական արդյունքների վրա:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջում հետազոտական գործունեությունը ամրագրված է որպես ռազմավարական առաջնահերթություն և ունի հստակ ձևակերպված գերակա ուղղություններ, որոնք համահունչ են կրթական ծրագրերի բովանդակությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողների հետազոտական գործունեությունը ինտեգրված է ուսումնառության գործընթացին և իրականացվում է նախագծային առաջադրանքների և արտադրական պրակտիկաների միջոցով՝ նպաստելով ուսումնառության կիրառական ուղղվածության ապահովմանը

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը արձանագրում է, որ ուսանողական հետազոտական գործունեությունը ներկայումս չի իրականացվում միասնական մեթոդական շրջանակի հիման վրա, ինչի արդյունքում սահմանափակվում է հետազոտական գործընթացի համակարգվածությունն ու համադրելիությունը:

Խումբը դրական է գնահատում, որ քոլեջը ներգրավում է գործընկեր կազմակերպություններին ուսանողների հետազոտական և նախագծային գործունեության

իրականացման գործընթացում՝ ամրապնդելով ուսումնառության և գործնական միջավայրի կապը։

Փորձագիտական խումբը նշում է, որ դասախոսական կազմն ունի գիտահետազոտական ներուժ, սակայն այդ ներուժը դեռևս ամբողջապես չի իրացվում ուսանողների հետ համատեղ հետազոտական գործունեության ձևաչափում։

Միևնույն ժամանակ արձանագրվում է, որ քոլեջում բացակայում են հետազոտական գործունեության խթանման նպատակային և համակարգված մոտեցումները, ինչը սահմանափակում է համատեղ նախագծերի զարգացումն ու հետազոտական մշակույթի կայացումը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում հետազոտական գործունեությունը ամրագրված է ռազմավարական փաստաթղթերում, իրականացվում է ուսումնական գործընթացի շրջանակներում և զարգանում է գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով, ինչպես նաև առկա են դասախոսների գիտահետազոտական ակտիվության դրական ցուցանիշներ, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ քոլեջը համապատասխանում է Չափանիշ 6-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՀ-ի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: Ենթակառուցվածքների բարելավումը և նյութատեխնիկական ռեսուրսների համալրումը քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից է: Քոլեջի 2025–2029 թթ. ռազմավարական ծրագրում սահմանված է նպատակ՝ վերականգնել և ձևավորել կրթական ծրագրերի իրականացման պահանջներին համապատասխան ենթակառուցվածքներ, ինչպես նաև ապահովել ֆինանսական կայուն և բազմազանեցված եկամտային հոսքեր: Նպատակների իրագործման համար ծրագրում նախատեսված են կոնկրետ խնդիրներ և գործողություններ՝ լսարանային և լաբորատոր պայմանների զարգացում, տեղեկատվական և գրադարանային համակարգերի արդիականացում, ֆինանսական պլանավորման և ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում:

Քոլեջը վարձակալության հիմունքներով զբաղեցնում է 787.7 քմ ընդհանուր մակերեսով տարածք, որից 141.3 քմ-ը կազմում է սպորտային դահլիճը: Ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման նպատակով քոլեջը գ. Պտղնիում վարձակալել է նաև 600 քմ հողամաս, որտեղ տեղակայված է ջերմոց՝ մշակաբույսերի մշակության և տեխնոլոգիական փորձարկումների նպատակով:

Քոլեջում ստեղծվել է անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) ուսումնահետազոտական լաբորատորիա՝ հագեցած վիրտուալ ծրագրային ապահովմամբ և որոշակի սարքավորումներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ լաբորատորիան ապագայում նախատեսվում է կիրառել «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» կրթական ծրագրում՝ մշակաբույսերի սրսկման, ինչպես նաև «Քաղաքաշինական կադաստր» կրթական ծրագրում՝ տարածքային չափագրումների նպատակով:

Կրթական ծրագրերի իրականացման համար քոլեջն ունի տարբեր ուսումնաօժանդակ ռեսուրսներ, այդ թվում՝ խորությունը չափող սարքեր, կաթիլային ոռոգման փորձասարք,

ոռոգման բաց համակարգի ջրաբաժան դիդակտիկ մոդել, չափիչ գործիքներ, մանրադիտակներ, զոդման սարքեր, դիդակտիկ նյութեր, մարզագույք։

Քոլեջում առկա է 8 լսարան և 20 համակարգիչ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ համակարգիչների մի մասը տեխնիկական վերազինման և ծրագրային ապահովման արդիականացման կարիք ունի։ Քոլեջն ունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաների համար որոշակի նյութատեխնիկական ռեսուրսներ և դիդակտիկ նյութեր։ Քիմիայի լաբորատորիան փորձագիտական այցի պահին գտնվում էր արդիականացման փուլում։

Քոլեջի գրադարանային ֆոնդը ներառում է շուրջ 115 միավոր գրականություն՝ դասագրքեր և մասնագիտական գրքեր։ Գրականությունը հիմնականում հայերեն է և թվայնացված չէ։ Գրականության հասանելիությունն ապահովելու նպատակով քոլեջը պայմանագրային հիմունքներով համագործակցում է «Անանիա Շիրակացի» համալսարանի, ինչպես նաև այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարանների հետ։ Ուսանողների համար որոշ էլեկտրոնային ուսումնանյութեր հասանելի են քոլեջի կայքում։

Գործնական պարապմունքների և արտադրական պրակտիկաների իրականացման ընթացքում քոլեջն ակտիվորեն օգտագործում է գործընկեր կազմակերպությունների նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսները։ Քոլեջն ունի 2 պրոյեկտոր (որից մեկը շարժական) և 3 հեռուստացույց, որոնք կիրառվում են ուսումնառության ընթացքում։ Վերջին տարիներին իրականացվել են լսարանային ֆոնդի որոշ վերանորոգումներ և բարելավումներ, որոնք հիմնականում իրականացվել են բարերարների աջակցությամբ (այդ թվում՝ «Armenia Tree Project», «Թուֆենկյան հիմնադրամ»)։

Քոլեջի ֆինանսական տվյալների համաձայն՝ 2024 թ.-ին ընդհանուր ծախսերի կառուցվածքում աշխատավարձերի ֆոնդը կազմել է 66.54 %, շենքերի և կառույցների ընթացիկ նորոգումն ու պահպանումը՝ 19.27 %, կոմունալ ծառայությունները՝ 2.85 %, տպագրական և տեղեկատվական ծառայությունները՝ 0.42 %, գրասենյակային նյութերը և գյուղիական տնտեսությունում աշխատելու արտահագուստը՝ 0.71 %, տրանսպորտային նյութերը՝ 0.45 %, իսկ այլ հարկերն ու վճարները՝ 9.76 %։

2025 թ.-ին քոլեջի բյուջեն աճել է մոտ 37 %-ով՝ համեմատած 2024 թ.-ի հետ։ Մուտքերի աճը ձևավորվել է ուսանողական վարձավճարների և նվիրատվությունների հաշվին։ 2025 թ.-ին աշխատավարձերի ֆոնդը կազմել է ընդհանուր բյուջեի մոտ 63 %-ը, ինչը վկայում է աշխատավարձերի տեսակարար կշռի որոշակի նվազման մասին՝ պահպանելով այն որպես ծախսերի հիմնական ուղղություն։ Միևնույն ժամանակ, քոլեջում դեռևս չի իրականացվել ֆինանսական համալիր պլանավորում, որը թույլ կտա գնահատել ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ամբողջական ծավալը և դրանց բաշխման արդյունավետությունը։

Քոլեջում ներքին և արտաքին հաղորդակցումն իրականացվում է էլեկտրոնային փոստի և փոստային ծառայությունների միջոցով։ Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է թղթային և էլեկտրոնային փոստի համակցմամբ, իսկ միասնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ ներդրված չէ։

Անվտանգության տեսանկյունից արձանագրվել է, որ քոլեջը չունի կենտրոնացված ջեռուցման համակարգ, ջեռուցումն իրականացվում է տեղային օդորակիչների և էլեկտրական ջեռուցիչների միջոցով։ Շենքում առկա են հակահրդեհային ջրատար խողովակ, կրակմարիչներ, պահակակետ և շուրջ 12 տեսախցիկ, սակայն բացակայում են տարհանման պլանները և անվտանգության կանոնների վերաբերյալ հրահանգավորման մատյանները։ Քոլեջում գործում է բուժկետ, որի ծառայություններից ուսանողները և դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են։ Քոլեջում ներկայումս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ չեն սովորում, իսկ շենքում բացակայում են թեքահարթակներ։

Ըստ ԻՎ տվյալների 2024–2025 ուստարում քոլեջում իրականացվել են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ ուսանողների շրջանում։ Հարցումների արդյունքներով

ուսանողները ընդհանուր առմամբ գոհ են համակարգչային սրահների մատչելիությունից, կահավորանքից և բուժկետի ծառայություններից, սակայն փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է համակարգչային տեխնիկայի արդիականացման և սպորտային դահլիճի վերանորոգման անհրաժեշտություն։

Դատողություններ: Փորձագիտական խումբը արձանագրում է, որ քոլեջը ռազմավարական մակարդակում հստակ սահմանել է ենթակառուցվածքների և ռեսուրսների զարգացման առաջնահերթությունները և դրանք ներառել է ռազմավարական ծրագրում։ Սա վկայում է, որ հաստատությունն ունի տեսլական՝ ուսումնական միջավայրի բարելավման և կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ենթակառուցվածքներ ձևավորելու ուղղությամբ։ Միևնույն ժամանակ, արձանագրվում է, որ ռազմավարական նպատակների իրականացումը մեծապես կախված է արտաքին ֆինանսական աղբյուրներից, ինչը սահմանափակում է պլանավորված բարելավումների կայուն և կանխատեսելի իրականացումը։

Փորձագիտական խումբը գնահատում է, որ քոլեջը կարողացել է ապահովել ուսումնական գործընթացի իրականացումը նվազագույն անհրաժեշտ տարածքային և նյութատեխնիկական պայմաններով։ Քոլեջի կողմից շահագործվող տարածքը և լսարանային ֆոնդը ընդհանուր առմամբ բավարար են կրթական ծրագրերի ընթացիկ կազմակերպման համար, իսկ գործնական ուսուցման նպատակով վարձակալված հողամասը և նախատեսվող ջերմոցային տնտեսությունը նպաստում են մասնագիտական կարողությունների ձևավորմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում առկա են ոլորտային գործնական ուսուցման համար անհրաժեշտ որոշակի սարքավորումներ և դիդակտիկ միջոցներ, ինչպես նաև ԱԹՍ-ների լաբորատորիա, որը կարող է դառնալ կրթական ծրագրերի զարգացման կարևոր ռազմավարական հենակետ։ Միևնույն ժամանակ խումբը շեշտադրում է, որ ձեռք բերված ռեսուրսները նպատակահարմար է ամբողջ ծավալով և համակարգված ձևով ինտեգրել կրթական ծրագրերի իրականացման մեջ՝ արագացնելով դրանց ներդրման պլանավորված քայլերը ՄԿԾ-ներում, քանի որ միայն դրանց գործնական կիրառությունը կարող է բարձրացնել ուսանողների մրցունակությունը և նպաստել քոլեջի գրավչության բարձրացմանը։

Փորձագիտական խումբը փաստում է, որ քոլեջի համակարգչային ռեսուրսները քանակապես սահմանափակ են և տեխնիկական ու ծրագրային արդիականացման կարիք ունեն։ Սա կարող է բացասաբար ազդել հատկապես SS և թվային հմտություններ պահանջող կրթական ծրագրերի որակի և ուսանողների գործնական պատրաստվածության վրա, եթե չիրականացվեն նպատակային բարելավումներ։

Խումբը արձանագրում է, որ գրադարանային ռեսուրսները սահմանափակ են թե՛ ծավալով, թե՛ արդիականությամբ, և գրականության թվայնացված հասանելիություն գրեթե բացակայում է։ Այլ բուհերի գրադարաններից օգտվելու հնարավորությունը որոշ չափով մեղմում է խնդիրը, սակայն չի կարող լիարժեք փոխարինել սեփական գրադարանային ենթակառուցվածքի զարգացման անհրաժեշտությունը։

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը արդյունավետորեն օգտագործում է գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները գործնական պարապմունքների և պրակտիկաների իրականացման համար, ինչը նպաստում է ուսանողների աշխատաշուկային համապատասխան պատրաստվածությանը։

Ֆինանսական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ քոլեջի բյուջեն 2025 թվականին աճել է, ինչը դրական միտում է և վկայում է ֆինանսական մուտքերի ընդլայնման մասին։ Սակայն ծախսերի կառուցվածքը շարունակում է մնալ աշխատավարձակենտրոն, իսկ ներդրումային և զարգացման բաղադրիչների տեսակարար կշիռը սահմանափակ է։ Սա սահմանափակում է ենթակառուցվածքների և ռեսուրսների ռազմավարական զարգացման հնարավորությունները միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում։

Միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը արձանագրում է, որ ռեսուրսների կիրառելիության և արդյունավետության գնահատումը հիմնականում հիմնված է ուսանողական հարցումների վրա, ինչը, լինելով կարևոր հետադարձ կապի աղբյուր, սահմանափակում է գնահատման բազմակողմանիությունն ու օբյեկտիվությունը՝ այլ տվյալների և չափելի ցուցանիշների բացակայության պայմաններում:

Խումբը փաստում է, որ անվտանգության և մատչելիության առումով առկա են որոշակի բացեր . մասնավորապես՝ բացակայում են տարհանման պլանները, անվտանգության հրահանգավորման համակարգված փաստաթղթավորումը և ֆիզիկական մատչելիության ապահովման ենթակառուցվածքները: Սրանք կարող են սահմանափակել անվտանգ և ներառական ուսումնական միջավայրի լիարժեք ապահովումը:

Եզրահանգում:Հաշվի առնելով, որ քոլեջն ունի ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ հիմնական ենթակառուցվածքներ, իրականացնում է դրանց փուլային բարելավման քայլեր, ինչպես նաև ներգրավում է գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները գործնական ուսուցման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՀ-ի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում գործում է ներքին հաշվետվողականության ներքևից վերև կառուցված համակարգ: Քոլեջի ստորաբաժանումները կիսամյակային և տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունները կառուցվածքով նախատեսված անմիջական ղեկավարներին: Ներկայացված հաշվետվությունները հիմնականում կրում են նկարագրական բնույթ՝ անդրադառնալով իրականացված գործողություններին, մինչդեռ ոչ բոլոր ստորաբաժանումների հաշվետվություններում են առկա իրականացված գործունեության արդյունքների քանակական կամ վերլուծական գնահատումներ:

Բոլոր ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա տարեկան կտրվածքով կազմվում է տնօրենի հաշվետվությունը, որը ներկայացվում է կառավարման խորհրդին և ներառում է քոլեջի տարեկան գործունեության և ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ տեղեկատվություն: Տնօրենը հաշվետու է հոգաբարձուների խորհրդին: Փորձագիտական այցի ընթացքում ուսումնասիրված տնօրենի հաշվետվությունները մեծամասամբ չունեն վերլուծական բնույթ և ներառում են իրականացված աշխատանքների ամփոփում, մասնավորապես՝ 2024 թվականի գործունեության վերաբերյալ:

Քոլեջը տեղեկատվության թափանցիկության և հասանելիության ապահովման նպատակով օգտագործում է սոցիալական մեդիա հարթակներ, մասնավորապես՝ ֆեյսբուքյան էջը, որտեղ պարբերաբար հրապարակվում են քոլեջի գործունեությանը վերաբերող նորություններ, միջոցառումների լուսաբանումներ և հայտարարություններ: 2024–2025 ուսումնական տարվանից գործարկվել է նաև պաշտոնական կայքէջը, որի միջոցով հասանելի են տնօրենի տարեկան հաշվետվությունը, կրթական ծրագրերի նկարագրությունները, կառավարման մարմինների որոշումները, ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ներքին կարգավորումների մի մասը:

Միևնույն ժամանակ, փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ քոլեջը չունի առանձին, պաշտոնական կայքէջ . քոլեջին վերաբերող տեղեկատվությունը տեղադրված է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ընդհանուր կայքէջում, ինչի հետևանքով քոլեջի

վերաբերյալ տեղեկատվության որոնումն ու հասանելիությունը օգտվողների համար բարդացած է, իսկ քոլեջի գործունեությունը բավարար չափով տարանջատված չէ համալսարանի ընդհանուր տեղեկատվական հոսքից:

Հասարակության հետ հետադարձ կապի ապահովման նպատակով հիմնականում կիրառվում են ֆեյսբուքյան էջի հաղորդագրությունների հարթակը և մեկնաբանությունների դաշտը, որոնց միջոցով քաղաքացիները, դիմորդները և այլ շահակիցներ հիմնականում դիմում են ընդունելության կարգի, կրթական ծրագրերի, ուսման վարձի և կազմակերպչական հարցերի վերաբերյալ: Մինչդեռ քոլեջում առայժմ ձևավորված չեն հասարակության հետ կապերի ապահովման նպատակով նախատեսված պաշտոնական, փաստաթղթավորված և կառավարվող հետադարձ կապի մեխանիզմներ, որոնք կապահովեին դիմումների համակարգված ընդունում, մշակումը և վերլուծությունը:

Քոլեջը հասարակական պատասխանատվության իր գործառույթն իրականացնում է համայնքային և սոցիալական նախաձեռնություններին մասնակցության միջոցով: Ուսանողների և աշխատակիցների ներգրավմամբ կազմակերպվել են ծառատունկի և բնապահպանական ծրագրեր «Armenia Tree Project» կազմակերպության հետ, իրականացվել են համայնքային մաքրման և կամավորական աշխատանքներ, ինչպես նաև սոցիալական նշանակության տարբեր նախաձեռնություններ: Քոլեջը համագործակցում է այլ ուսումնական հաստատությունների հետ՝ համատեղ սպորտային միջոցառումների և մրցույթների կազմակերպման միջոցով խթանելով առողջ ապրելակերպը և ուսանողների սոցիալական ակտիվությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ուսանողների կողմից հաքաթոնի շրջանակում մշակված «Առաջին բուժօգնության» թեմայով վեբպլատֆորմը դիտարկվում է որպես քոլեջի սոցիալական ներդրման օրինակ՝ միաժամանակ նպաստելով ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և հասարակության համար օգտակար տեղեկատվական ռեսուրսի ստեղծմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջում գործող ներքին հաշվետվողականության համակարգը ներկայումս առավելապես ուղղված է գործընթացների նկարագրությանը և լիարժեք չի նպաստում արդյունքների, թիրախների կատարման և ազդեցության գնահատմանը, ինչի հետևանքով հաշվետվողականությունը սահմանափակ կերպով է ծառայում կառավարման արդյունավետությանը:

Խումբը գտնում է, որ ստորաբաժանումների հաշվետվությունների միջև միասնական մոտեցման և համադրելի ցուցանիշների ձևավորումը կարող է նպաստել հաստատության գործունեության ավելի ամբողջական և համակարգային պատկերացմանը:

Տեղեկատվության թափանցիկության և հանրային հաշվետվողականության բարելավման նպատակով նպատակահարմար է ուժեղացնել քոլեջի ինքնուրույն հանրային ներկայությունը՝ ապահովելով քոլեջին վերաբերող տեղեկատվության հստակ առանձնացում և կառուցվածքային ներկայացում: Փորձագիտական խումբը գնահատում է, որ քոլեջի կողմից իրականացվող գործունեության, արդյունքների և հնարավորությունների առավել լայն և կառուցվածքային ներկայացումը կարող է նպաստել շահակիցների շրջանում հաստատության ճանաչելիության և ներգրավվածության աճին:

Փորձագիտական խումբը գնահատում է, որ քոլեջի հասարակական պատասխանատվության գործունեությունը ներկայումս հիմնականում իրականացվում է առանձին նախաձեռնությունների մակարդակում: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ քոլեջը գործունեությունը իրականացնում է նոր սոցիալական և կրթական միջավայրում, հասարակական պատասխանատվության գործունեության ռազմավարական և ծրագրային ձևաչափով զարգացումը կարող է նպաստել քոլեջի դիրքերի ամրապնդմանը, ճանաչելիության բարձրացմանը և համայնքի հետ կապերի խորացմանը:

Փորձագիտական խումբը նաև նշում է, որ հաստատության կրթական և մասնագիտական ներուժը կարող է առավել նպատակային կերպով ծառայեցնել

հասարակության համար բաց և շարունակական կրթական նախաձեռնություններին, ինչը, հատկապես ներկայիս պայմաններում, կարող է դառնալ քոլեջի հանրային դերակատարության և վստահության ձևավորման կարևոր գործիք:

Եզրահանգում:

Հաշվի առնելով, որ քոլեջում գործում է միայն ներքին հաշվետվողականության համակարգ, առկա հաշվետվությունները հիմնականում նկարագրողական են և չեն ապահովում արդյունքահեն վերլուծություն, առկա չեն հասարակության հետ կայուն և կառավարվող հետադարձ կապի մեխանիզմներ, իսկ հանրային հաշվետվողականության և տեսանելիության գործիքներն ունեն սահմանափակ արդյունավետություն, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի համապատասխանում չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՀ-ի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

Քոլեջի 2024–2029 թթ. ռազմավարական ծրագրով արտաքին կապերը և միջազգայնացումը դիտարկվում են որպես ռազմավարական նպատակ: Նպատակի իրագործման համար սահմանվել են հիմնախնդիրներ (միջազգային փորձի կիրառում, աշխատակազմի մասնագիտական ուսուցման/վերապատրաստումների և շարժունության խթանում, շահակիցների հետ փոխհամագործակցության մեխանիզմների բարելավում, քոլեջի ճանաչելիության բարձրացում համագործակցությունների միջոցով, ինչպես նաև կրթության/հետազոտության ոլորտում քաղաքականությունների և կարգավորումների խթանում), որոնց իրականացման քայլերը արտացոլված են ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցում:

Քոլեջում կիրառվում են «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի արտաքին կապերի և միջազգային համագործակցության քաղաքականություն», ինչպես նաև շարժունությունը խթանող ներքին կարգավորումներ և կանոնակարգեր (ներքին շահակիցների շարժունության խթանում, միջազգային ծրագրերում ուսանողների և գիտամանկավարժական աշխատողների շարժունության կազմակերպման կանոնակարգ): Փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ գործող քաղաքականությունների և կարգավորումների մի մասը ձևավորված է բուհական կառավարման տրամաբանությամբ, ինչի արդյունքում առանձին դեպքերում առաջանում է դրանց միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին համապատասխանեցման անհրաժեշտություն:

Արտաքին կապերի համակարգման նպատակով քոլեջում գործում է արտաքին կապերի բաժին, որը ձևավորվել է 2017 թվականից (բուհական կառուցվածքից փոխանցված ձևաչափով շարունակում է գործել նաև քոլեջում): Բաժինը համալրված է մեկ աշխատակցով՝ հասարակական հիմունքներով, որը պատասխանատու է գործընկերային կապերի համակարգման, նոր համագործակցությունների ձևավորման և իր գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունների պատրաստման և ներկայացման համար:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջը կրթական ծրագրերի իրականացման ընթացքում ունի համագործակցությունների լայն շրջանակ և բոլոր կրթական ծրագրերի համար առկա են գործատու գործընկերներ, որոնց մասնակցությամբ կազմակերպվում են արտադրական և ուսումնական պրակտիկաներ, ճանաչողական այցեր,

մասնագիտական հանդիպումներ և գործնական բաղադրիչների հարստացման միջոցառումներ: Արձանագրության համաձայն՝ քոլեջը համագործակցում է, մասնավորապես, Green Lane-ի, Armenia Tree Project-ի, ԱԹՍ (անօդաչու թռչող սարքերի) ոլորտի գործատուների և այլ մասնագիտական կազմակերպությունների հետ, ընդ որում՝ գործատու-դասախոսներ ներգրավված են կրթական ծրագրերում և ապահովում են գործնական ուսուցման կազմակերպումը նաև գործընկերների հարթակներում:

Արտաքին կապերի շրջանակում Քոլեջը նախաձեռնում է կրթական միջավայրի զարգացմանն ուղղված համագործակցության նախաձեռնություններ տարբեր կառույցների հետ: Մասնավորապես, քոլեջը համագործակցային պայմանավորվածությունների մակարդակում ձևավորել է կապեր Ճապոնիայի դեսպանատան հետ՝ SS ուղղությամբ ենթակառուցվածքների վերազինման և վերանորոգման հնարավոր ծրագրերի շուրջ, ինչպես նաև «Թուֆենկյան» հիմնադրամի հետ՝ դուալ կրթության ներդրման նպատակով, և այլ դոնոր կազմակերպությունների հետ՝ նյութատեխնիկական բազայի զարգացման ուղղությամբ: Միաժամանակ պետք է նշել, որ նշված համագործակցությունները գտնվում են նախնական պայմանավորվածությունների փուլում, և դրանց շրջանակում չափելի արդյունքներ դեռևս չեն արձանագրվել:

Օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ արձանագրվել է, որ քոլեջում կազմակերպվել են և իրականացվում են օտար լեզվի (հատկապես՝ անգլերենի) վերապատրաստումներ . արձանագրության համաձայն՝ դասախոսների մի մասը մասնակցում է Project Harmony-ի շրջանակում կազմակերպվող անգլերենի դասընթացներին, ինչպես նաև առանձին դասախոսներ ներգրավված են ԱՄՆ դեսպանատան ծրագրով իրականացվող վերապատրաստումներում:

Միջազգայնացման ուղղությամբ քոլեջի գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործընթացները հիմնականում գտնվում են պլանավորման փուլում . ՄՈՒՀ-ը նպատակադրված է ներգրավվել Էրազմուս+ ծրագրերին և ներկայումս իրականացնում է քայլեր միջազգային գործընկերների որոնման և համագործակցային կապերի ձևավորման ուղղությամբ:

Արտաքին կապերի շրջանակում քոլեջը կազմակերպել է դասընթացներ և մասնագիտական հանդիպումներ դասախոսների և ուսանողների համար՝ արտաքին գործընկերների և ոլորտային մասնագետների ներգրավմամբ, մասնավորապես իրականացվել են SS ուղղությամբ սեմինարներ արտաքին փորձագետների մասնակցությամբ, դասընթացներ՝ ԹՈՒՄՕ-ի մարզիչների կողմից, ինչպես նաև թեմատիկ դասախոսություններ՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոսների ներգրավմամբ:

Ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասախոսների 83.3%-ը, վարչական աշխատակիցների 88.9%-ը և ուսանողների մոտ 73%-ը տիրապետում են օտար լեզուների՝ հիմնականում ռուսերեն կամ անգլերեն: Սակայն քոլեջը չունի հստակ տվյալներ, թե քանի տոկոսը լեզվին է տիրապետում և ինչ մակարդակով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է, որ քոլեջում արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները գտնվում են ձևավորման և աստիճանական զարգացման փուլում, ինչը բնական է հաստատության կազմակերպչական և կառավարչական զարգացման ներկա փուլում: Միևնույն ժամանակ արձանագրվում է, որ առկա են արտաքին համագործակցության զարգացման հստակ ուղղվածություն և համակարգային մոտեցման ձևավորման նախադրյալներ:

Քոլեջի ռազմավարական ծրագրում արտաքին կապերն ու միջազգայնացումը հստակ ձևակերպված են որպես զարգացման առաջնահերթություն, ինչը հնարավորություն է տալիս այդ գործընթացները հետագայում զարգացնել ավելի նպատակային և համադրելի կերպով՝ ռազմավարական նպատակների շրջանակում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում գործատուների և մասնագիտական կազմակերպությունների հետ ձևավորված համագործակցությունների լայն շրջանակը՝ նշելով,

որ այդ կապերը էականորեն նպաստում են կրթական ծրագրերի գործնական ուղղվածության ամրապնդմանը և ուսանողների աշխատաշուկային պատրաստմանը: Միևնույն ժամանակ, այդ համագործակցությունների հետագա զարգացումը կարող է ավելի հստակ կապվել արտաքին կապերի ընդհանուր ռազմավարության և միջազգայնացման նպատակների հետ:

Միջազգայնացման ուղղությամբ արձանագրվում է հաստատության ակտիվ հետաքրքրվածություն և ներգրավվածության փորձ միջազգային ծրագրերում, սակայն գործընթացները ներկայումս առավելապես գտնվում են նախապատրաստման և մասնակցության հնարավորությունների որոնման փուլում: Սա վկայում է միջազգայնացման զարգացման ներուժի առկայության մասին, որը կարող է առավել ամբողջական իրացվել համակարգված մոտեցման ձևավորման պայմաններում:

Փորձագիտական խումբը նշում է, որ միջազգայնացման գործողությունների արդյունավետության գնահատման համար ներկայումս սահմանափակ են կիրառվող չափելի ցուցանիշները, ինչի հետևանքով գործընթացների ազդեցության գնահատումը դժվար է իրականացնել: Միևնույն ժամանակ, առկա ռազմավարական փաստաթղթերը հիմք են ստեղծում հետագայում նման ցուցանիշների ձևավորման և կիրառման համար:

Փորձագիտական խումբը նշում է, որ օտար լեզուների իմացության վերաբերյալ ներկայացված տվյալները հնարավորություն չեն տալիս հստակ գնահատելու անգլերենի տիրապետման մակարդակը դասախոսական և վարչական կազմի, ինչպես նաև ուսանողների շրջանում: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով անգլերենի կարևորությունը միջազգայնացման գործընթացում, նպատակահարմար է ակտիվացնել օտար լեզուների և միջազգային բաղադրիչների ներառումը ուսումնական գործընթացում՝ դասընթացների, համատեղ նախագծերի շրջանակում, առանց պարտադիր շարժունության ծրագրերի վրա հիմնվելու:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի արտաքին կապերի և միջազգայնացման զարգացմանն ուղղված հստակ ռազմավարական տեսլական,միջազգայնացման գործընթացները գտնվում են ձևավորման և աստիճանական զարգացման փուլում՝ պայմանավորված հաստատության նորությամբ և կազմակերպական համակարգերի կայացման ընթացքով, միաժամանակ առկա են կոնկրետ նախաձեռնություններ, զարգացման դրական միտումներ և արտաքին գործընկերային կապեր, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը համապատասխանում է չափանիշ 9-ի պահանջին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՀ-ի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջում որակի ապահովման համակարգի ձևավորման և ներդրման գործընթացները մեկնարկել են 2025 թվականից՝ որպես կառավարման և հիմնական գործընթացների շարունակական բարելավման ուղղություն: Որակի մշակույթի ձևավորման նպատակով քոլեջը ձևավորել է համապատասխան փաստաթղթային բազա. մասնավորապես՝ առկա է «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի քաղաքականությունը որակի ապահովման ոլորտում» փաստաթուղթը (մշակված՝ 2019 թ., վերանայված՝ 2025 թ.՝ պահպանելով նույն

անվանումը), ինչպես նաև 2024 թվականին մշակված «Որակի ապահովման ձեռնարկ»-ը, որտեղ ներկայացված են որակի քաղաքականության սկզբունքները, գնահատման մեխանիզմները, կրթական ծրագրերի բարելավման մոտեցումները, շահակիցների ներգրավման ձևաչափերը և ինքնագնահատման պարբերականության ու պատասխանատվությունների բաշխումը: Փաստաթղթերում որակի ապահովման գործընթացները նկարագրվում են բուհական կառավարման տրամաբանությամբ՝ նախատեսելով այնպիսի պաշտոնների և դերակատարների ներգրավում, ինչպիսիք են ռեկտորը և պրոռեկտորները, որոնք քոլեջային կառավարման մակարդակում չեն գործում: Արդյունքում փաստաթղթային հենքը լիարժեքորեն չի համապատասխանեցվել միջին մասնագիտական կրթական հաստատության կառավարման կառուցվածքին և որակի ապահովման համակարգի կազմակերպման առանձնահատկություններին:

Որակի ապահովման աշխատանքների կազմակերպման համար քոլեջում նախատեսված է 0.5 դրույքաչափով հաստիք, ինչպես նաև փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նույն անձը համատեղում է մի քանի գործառույթներ (հասարակայնության հետ կապեր, բուժկետի պատասխանատու և դասախոս): Քոլեջը գիտակցում է բաժնի համալրման անհրաժեշտությունը, սակայն այն դեռևս ամբողջությամբ չի իրականացվում ֆինանսական սահմանափակումների պատճառով:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՈԱ պատասխանատուի պլանը փաստացի կրկնում է ռազմավարական ծրագրի գործողությունների պլան–ժամանակացույցը և չի ձևավորվել որպես որակի ապահովմանն ուղղված ինքնուրույն աշխատանքային փաստաթուղթ: Թեև ՈԱ պատասխանատուն ընդգրկված է ռազմավարական ծրագրով նախատեսված գրեթե բոլոր գործողություններում, փորձագիտական այցի ընթացքում արձանագրվել է, որ այդ գործողությունների զգալի մասում նրա իրական դերակատարումը հստակ սահմանված չէ և գործնականում չի դրսևորվում:

Քոլեջում տվյալների հավաքագրումն իրականացվում է հիմնականում հարցումների և դասալսումների միջոցով: Հարցումները կազմակերպվում են հիմնականում էլեկտրոնային (QR) ձևաչափով, և քոլեջը փորձում է ապահովել մասնակցության բավարար մակարդակ (նշվել է շուրջ 60% մասնակցություն): 2024–2025 ուստարում իրականացվել են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում, որոնց ամփոփմամբ ուսանողները բարձրաձայնել են գրադարանային ֆոնդի, ջեռուցման և լաբորատոր սարքավորումների հագեցվածության խնդիրներ, իսկ դասախոսները՝ ուսանողների մոտիվացիայի և ուսումնական նյութերի հետ կապված դժվարություններ: 2025 թվականին իրականացվել է նաև «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցումը, որի արդյունքները քննարկվել են գիտխորհրդում և ներկայացվել տնօրինությանը. արձանագրվել է, որ արդյունքներով առնվազն մեկ դասախոսական դեպքով կայացվել է կառավարչական որոշում (աշխատանքից ազատում):

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման շրջանակում իրականացվում են նաև ֆոկուս-խմբային հանդիպումներ, սակայն դրանք դեռևս չեն իրականացվում պլանավորված և համակարգված ձևով և հիմնականում ուղղված չեն կոնկրետ խնդիրների նպատակային քննարկմանն ու լուծմանը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ իրականացվել են առանձին ֆոկուս-խմբային քննարկումներ ուսանողների և գործատուների հետ, որոնց արդյունքում որոշ դեպքերում կայացվել են գործնական որոշումներ, մասնավորապես՝ պրակտիկայի ժամերի ավելացման ուղղությամբ՝ ծրագրերի գործնական բաղադրիչը ուժեղացնելու նպատակով:

Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության (ԻՎ) գործընթացը կազմակերպվել և համակարգվել է ՈԱ պատասխանատուի կողմից: ԻՎ-ն տեղադրվել է քոլեջի կայքէջում և ունեցել է դիտումներ (նշվել է՝ 54 դիտում): Միևնույն ժամանակ, փորձագիտական գնահատմամբ ինքնավերլուծության տարածումը և քննարկումը շահակիցների ամբողջական

շրջանակում դեռևս լիարժեք չի ապահովվել, և գործատուների ներգրավվածությունը տվյալ գործընթացում սահմանափակ է։

Դատողություններ: Քոլեջում որակի ապահովման համակարգը գտնվում է ձևավորման և անցումային փուլում և դեռևս չի գործում որպես կառավարման և զարգացման գործընթացներին ուղղակիորեն աջակցող գործիք։ Առկա մոտեցումները և փաստաթղթային հենքը ամբողջովին չեն արտացոլում միջին մասնագիտական կրթական հաստատության կառավարման տրամաբանությունն ու առաջնահերթությունները։ Խումբը կարևորում է, որ որակի ապահովման համակարգի տրամաբանությունը հարմարեցվի միջին մասնագիտական կրթության առանձնահատկություններին՝ շեշտադրելով կիրառական ուսուցումը, հմտությունների ձևավորումը և աշխատաշուկայի հետ ծրագրերի արդյունավետ կապը։ Նման մոտեցումը թույլ կտա կրթական ծրագրերի բովանդակությունն ու կազմակերպումը դարձնել ավելի նպատակային և գործատուակենտրոն՝ համահունչ քոլեջի անցումային ռազմավարության առաջնահերթություններին։

Իրականացված հարցումների, ֆոկուս-խմբերի և այլ որակական ու քանակական տվյալների հավաքագրումը ներկայումս ամբողջապես չի ապահովում խորքային և համադրված վերլուծությունների իրականացում։ Քոլեջը կարիք ունի որակի ապահովման գործընթացներում համակարգված կերպով համադրել քանակական տվյալները (ուսանողների առաջադիմություն, առաջընթաց, ավարտելիություն) և որակական տվյալները (դասալսումների արդյունքներ, ուսանողներին տրվող առաջադրանքներ, ուսանողների և գործատուների դիտարկումներ)։ Այս համատեքստում նպատակահարմար է ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացներում առավել ակտիվ ներգրավել մասնագիտական ամբիոններին՝ ապահովելով կրթական ծրագրերի արդյունավետության վերլուծություն դասավանդման գործընթացի, ուսումնառության արդյունքների, ուսանողների առաջընթացի, ինչպես նաև շրջանավարտների զբաղվածության և աշխատաշուկայի պահանջների հիման վրա։ Նման մոտեցումը հնարավորություն կտա գնահատել կրթական ծրագրերի իրական կապը աշխատաշուկայի հետ և վերլուծել, թե որքանով է քոլեջը կարողանում պատրաստել կարողունակ և մրցունակ մասնագետներ։

Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում առկա փաստաթղթային հենքը՝ կրթական ծրագրերի մոնիթորինգի, վերանայման և որակի ապահովման քաղաքականություններն ու ընթացակարգերը, հետագա փուլում վերանայվեն և համապատասխանեցվեն այս տվյալահեն և վերլուծական մոտեցմանը՝ ապահովելով դրանց գործառնական կիրառելիությունը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ քոլեջում որակի ապահովման ներքին համակարգը ներկայումս չի ապահովում հաստատության գործընթացների շարունակական բարելավման համար անհրաժեշտ ամբողջական, համակարգված և արդյունքակենտրոն գործառույթների իրականացումը, իսկ առկա քաղաքականություններն ու մեխանիզմները դեռևս բավարար չափով չեն կիրառվում կառավարչական որոշումների կայացման, ծրագրերի բարելավման և որակի մշակույթի ձևավորման նպատակով, փորձագիտական խումբը եզրակացնում է, որ որակի ապահովման համակարգը չի գործում որպես կառավարման արդյունավետ գործիք։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՀ-ի քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում



Փորձագիտական խմբի ղեկավար

Հերմինե Գրիգորյան
Փետրվարի 20, 2026թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Հերմինե Գրիգորյան՝** Դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, 1987-1992 թվականներին ուսում ստացած է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: 1992-1997 թվականներին աշխատել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի «Մաթեմատիկական անալիզի» ամբիոնում՝ որպես ստաժոր-հետազոտող: 1997-2007 թվականներին եղել է նույն ինստիտուտի դասախոս: 2007-2014 թվականներին՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մաթեմատիկական անալիզի» ամբիոնի ավագ դասախոս: 2014-2020 թվականներին՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան: 2020-ից առ այսօր՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի բնական գիտությունների ֆակուլտետի դեկան:
2. **Օլեգ Գևորգյան՝** Դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու: 2007-2010 թվականներին աշխատել է ՀՊՃՀ Կիբեռնետիկայի դեպարտամենտի կրտսեր գիտաշխատող: 2010-2015 թվականներին աշխատել է ՀՊՃՀ Կիբեռնետիկայի ֆակուլտետի ասիստենտ: 2016-2022 թվականներին եղել է ՀԱՊՀ «Էլեկտրոնային տեխնիկա» ամբիոնի դոցենտ, իսկ 2022 թվականից մինչ օրս՝ ՀԱՊՀ «Էլեկտրոնիկա, կեսաբժշկանակ և չափիչ համակարգեր» ամբիոնի դոցենտ: 2015–2022 թվականներին զբաղեցրել է տարբեր պաշտոններ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում՝ ներառյալ առաջատար և գլխավոր մասնագետի պաշտոնները: 2022-ից առ այսօր ՀԱՊՀ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի Գիտական, գիտատեխնոլոգիական համագործակցության և արտաքին կապերի գծով տնօրենի տեղակալ:
3. **Սուսաննա Օրդոյան՝** 1984-1990 թվականներին ուսում ստացել է Հայաստանի անասնաբուժական ինստիտուտում՝ Անասնաբուժություն մասնագիտությամբ: 1977-2020 թվականներին աշխատել է Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում՝ դասախոս, մեթոդիստ, որակի պատասխանատու, և պարբերաբար դասավանդել է: 2020-ից առ այսօր ղեկավարում է Դուալ կրթական ծրագրերը նույն հաստատությունում:
4. **Գարեգին Դավթյան՝** 2023-ից առ այսօր սովորում է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում՝ Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում բաժնում:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	01.10.2025 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ	11:00	12:30	30 րոպե
2.	Ռեսուրսների դիտարկում	12:30	13:40	70 րոպե

N.	13.10.2025 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում տնօրենի տեղակալների հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:40	12:30	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:30	50 րոպե
5.	Հանդիպում Հոգաբարձուների խորհրդի անդամների հետ	13:40	14:30	50 րոպե
6.	Հանդիպում շրջանավարտների (10-12 ներկայացուցիչ) հետ	14:40	15:30	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ	15:40	16:30	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:40	18:00	80 րոպե

N.	14.10.2025 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնի վարիչների հետ			09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ			10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ			11:40	12:30	50 րոպե
4.	Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ			12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:20	14:10	50 րոպե
6.	Զուգահեռ հանդիպում «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուների և դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուների և դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Քաղաքաշինական կադաստր» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատուների և դասախոսների հետ	14:20	15:10	50 րոպե
7.	Զուգահեռ հանդիպում «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության	Զուգահեռ հանդիպում «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Քաղաքաշինական կադաստր» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	15:20	16:10	50 րոպե

	ն կրթական ծրագրերի ուսանողների հետ					
8.	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ (Ուսումնամեթոդական բաժնի տեղակալ ՄՄԿԾ-ի գծով, արտաքին կապերի բաժին, Հրատարակչության,լրատվության,տեխնիկական սպասարկման և հասարակայնության հետ կապերի բաժին, Կադրերի և ընդհանուր բաժին, բուժկետ, Կարիերայի զարգացման և շարունակական կրթության կենտրոնի բաժնի, հաշվապահություն, գրադարան)			16:20	17:20	60 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:30	18:30	60 րոպե

N.	15.10.2025թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում Որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Բաց հանդիպում	10:40	11:20	40 րոպե
3.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	12:30	13:00	30 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
6.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:20	17:00	160 րոպե
7.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	17:10	17:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Արձանագրություններ, որոնք ցույց են տալիս, որ շահակիցների առաջարկը դարձել է ռազմավարական ծրագրի փոփոխության հիմք	1
2.	Կարճաժամկետ և միջնաժամկետ պլան-ժամանակացույց	1
3.	Ստորաբաժանումների հաշվետվություններ	2
4.	Ստորաբաժանումների աշխատանքային պլաններ	2
5.	Բոլոր խորհուրդների նիստերի արձանագրություններ	2
6.	Վարձավճարները բոլոր կրթական ծրագրերի համար	3
7.	Ուսումնական պլաններ (գործող)	3
8.	Ըստ մասնագիտությունների՝ գործատուների քանակը և հիմքերը	3
9.	Պրակտիկայի ժամանակացույց	3
10.	Պրակտիկայի պայմանագրեր	3
11.	Մատյաններ	3
12.	Առաջադրենքներ /3 ՄԿԾ-ներից/	3
13.	ՈւԽ աշխատանքային պլան	4
14.	ՈւԽ կանոնակարգ	4
15.	Նախաքննական խորհրդատվության ժամակացույց	4
16.	ՈւԽ հաշվետվություն	4
17.	Ուսանողների հաշվետվությունների օրինակներ	4
18.	Պրակտիկայի օրագրեր	4
19.	Դասախոսների փաթեթներ	5
20.	Դասալսումների ձևաթուղթ	5
21.	Վերապատրաստված դասախոսների ցանկ	5
22.	Դասախոսների կողմից մշակված ձեռնարկներ	6
23.	Ռեֆերատների օրինակներ	6
24.	Առաջադրանքների ցանկ, որոնք հետազոտական բաղադրիչ են պարունակում	6
25.	Դասախոսների կողմից տպագրված հոդվածների ցանկ	6
26.	Տարիֆիկացիա	7
27.	Նախահաշիվ	7
28.	Քոլեջում առկա լաբորատոր սարքավորումների ցանկ և քանակ	7
29.	Համագործակցության պայմանագրեր	9
30.	Իրականացվող հարցումների ձևաթղթեր	10
31.	Իրականացված հարցումների վերլուծություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԻՎ** - Ինքնավերլուծություն
2. **ՄԿԾ**- Մասնագիտական կրթական ծրագիր
3. **ՄԿՈՒ**- Մասնագիտական կրթություն և ուսուցում
4. **ՄՈՒՀ** -Մասնագիտական ուսումնական հաստատություն
5. **ՄԿՈՒԶԱԿ**- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
6. **ՊԻԳԲ** -Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
7. **ՊԿՉ** - պետական կրթական չափորոշիչ
8. **ՊՈԱԿ** - Պետական ոչ առևտրային կազմակերպություն
9. **ՌԾ**- Ռազմավարական ծրագիր
10. **ՈԱԱԿ** -Որակի ապահովման ազգային կենտրոն
11. **ՈԱՇ** -Որակավորումների ազգային շրջանակ
12. **ՈԱԿ**- Որակի ապահովման կենտրոն
13. **ՈԿՀ**- Որակի կառավարման համակարգ
14. **ՈՒԽ**- Ուսանողական խորհուրդ